ՁԵՎ N 2

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 18.11.2021թ. N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թթ. գործունեության 2025 թ. իրականացված միջոցառումների վերաբերյալ

ծրագրի հերթական համարը	նպատակը	միջոցառումների անվանումները	միջոցառումների իրականացման արդյունքները	միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները	ծանոթագրություն
1	2	3	4	5	7
2.	Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների լայն կիրառում ուսուցման ու կրթության կառավարման համակարգերում	2.6 Բարձրագույն կրթության մակարդակում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) կիրառմամբ կրթության կազմակերպման գործընթացի արդիականացում՝ թվային հարթակի ներդրմամբ Ժամկետ՝ 2025 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	ԿԿՏՀ ամբողջականացված հարթակը գործում է: Միաժամանակ միջոցներ են ձեռնարկվել նոր՝ 2025/2026 ուսումնական տարում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների տվյալները EMIS համակարգում թարմացնելու ուղղությամբ: Մասնավորապես, բարձրագույն ուսումնական հաստատությունները մուտքագրել են 1-ին կուրս ընդունված ուսանողների տվյալները և համապատասխան փոփոխություններ են կատարել այլ կուրսերի ուսանողների կարգավիճակների և շարժունության էջերում: Հարթակում ներառված են շուրջ 77 500 ուսանողների անձնական տվյալներ: Ընթացքում է թվային ավարտական փաստաթղթերի ստեղծման գործընթացը, որով պլանավորվում է 2025/2026 ուսումնական տարվա ավարտին վերջնականացնել թվայնացման աշխատանքները, իսկ 2027 թվականից՝ մեկնարկել թվային փաստաթղթերի տրամադրումը: ԿՏԱԿ-ը իրականացնում է նաև EMIS համակարգի և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համապատասխան հարթակից՝ անապահովության գնահատման համակարգում ընդգրկած ուսանողների տվյալների փոխանցման և համակցման աշխատանքները:		

			Կրթության կառավարման տեղեկատվական միասնական հարթակի ամբողջականացման և գործարկման աշխատանքներն ընթացքի մեջ են:		
		2.7 Բուհերում դասապրոցեսի կազմակերպման գործընթաց-ների էլեկտրոնային հարթակ-ների մշակման և ներդրման մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում Ժամկետ՝ 2025թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-ին մասի 1-ին կետի համաձայն՝ բուհն ունի ակադեմիական գործունեության ինքնավարություն՝ իր կրթական ու գիտական գործառույթներն ինքնուրույն սահմանելու, կազմակերպելու, իրականացնելու և կառավարելու իրավասություն: Բուհերում դասապրոցեսի կազմակերպման համար մշակված էլեկտրոնային հարթակի ներդրումը հիմնականում ապահովված է բուհերի (ԵՊՀ, ՀՊՄՀ, ՀՊՏՀ, ՀԱՊՀ) կողմից՝ օրենքով վերապահված կրթական գործընթացի կազմակերպման ինքնուրույնության և ակադեմիական ազատության շրջանակում՝ ««Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքին ու դրանից բխող գործողությունների ծրագրով նախանշված թիրախներին համահունչ:	Ելնելով նշյալից, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի օգոստոսի 17-ի «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի վարման կարգը և կրթության ոլորտի պետական վարչական ռեգիստրը ներդնելու մասին» N 65-Ն հրամանը, որով արդեն իսկ սահման-ված են կրթական գործընթացների կառավարման և հաշվառման միաս-նական մեխանիզմ-ներ, ինչպես նաև անմիջական լիազորող նորմի բացակայությունը՝ «Բուհերում դասապրոցեսի կազմակերպման գործընթացների էլեկտրոնային հարթակների մշակման և ներդրման մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի առանձին հրամանի ընդունումը	

				նպատակահարմար չէ:	
8.	Կառուցել, հիմնանորոգել և վերանորոգել առնվազն 300 հանրակրթական ուսումնական հաստատություններիր՝ ապահովել դրանց ամբողջական հագեցումը անհրաժեշտ գույքով և սարքավորումներով	8.4 Ցանկում ընդգրկված հաստատություններում շինարարական աշխատանքների իրականացում և անհրաժեշտ գույքով և սարքավորումներով հագեցվածության ապահովում Ժամկետ՝ 2022 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ- 2026 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	2021-2025 թվականների ընթացքում կառուցվել, վերակառուցվել և վերանորոգվել/հիմնանորոգվել է ավելի քան 100 դպրոց՝ այդ թվում կառուցում՝ 36-ը, վերակառուցում՝ 3-ը, վերանորոգում/հիմնանորոգում՝ 61-ը: Նշվածներից 55-ը՝ 2025 թվականին:		
11.	Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների և դրանցում իրականացվող ծրագրերի տեղաբաշխման ռացիոնալացում	11.1 «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն /ՆՄՄԿ/ իրականացնող ուսումնական հաստատությունների վերակազմակերպում Ժամկետ՝ 2022-2026թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	- ՀՀ կառավարության 2025թ. մարտի 27-ի N 343-Ա որոշմամբ Երևանի թիվ 8 և Երևանի թիվ 9 արհեստագործական պետական ուսումնարանները միաձուլման ձևով վերակազմակերպվել են՝ ստեղծելով «Երևանի արհեստի պետական քոլեջ» պետական ոչ առեվտրային կազմակերպությունը: - ՀՀ կառավարության 2025 թվականի ապրիլի 17-ի N 441-Ա որոշմամբ «Գորիսի պետական քոլեջ» և «Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպվել են՝ ստեղծելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Գորիսի բազմագործառութային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը: Ընթացքում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող «Բյուրեղավանի արհեստագործական պետական ուսումնարան» և «Նոր Գեղիի ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների միացման ձևով միաձուլման և «Նոր Գեղիի բազմագործառութային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության ստեղծման գործընթացը:		

12.	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի ուսումնական հաստատությունների կառավարման արդյունավետության բարձրացում և դրանց ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների և ձևերի ընդլայնում	12.2 Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների և ձևերի ընդլայնման նպատակով ՆՄՄԿ հաստատությունների կանոնադրություններում համապատասխան փոփոխությունների և լրացումների կատարում Ժամկետ՝ 2025 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	«Հայաստանի Հանրապետության պետական քոլեջների ցանկը հաստատելու, մի շարք քոլեջներ վերանվանելու, պետական քոլեջի օրինակելի կանոնադրությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 20-ի N 1009-Ն և 2004 թվականի հուլիսի 1-ի N 1210-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության 2025թ դեկտեմբերի 25-ի N 1942-Ն որոշմամբ:		
13.	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտի զբաղունակության բարելավում	13.2 «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում փորձարարական կարգով աշխատանքի վրա հիմնված ուսուցման և դուալ ուսուցման համակարգի ներդրում Ժամկետ՝ 2022-2026թթ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	2025-2026թթ.-ից 3 ուսումնական հաստատությունում. դուալ ուսուցման ձևով ծրագրեր կներդրվեն հետևյալ 3 մասնագիտությունով. • Գյուղատնտեսության մեքենայացում - Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Անտոն Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջ. • Պահածոների և սննդախտանյութերի տեխնոլոգիա - Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղի միջին մասնագիտական կրթական ծրագիր, • Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա- Բերդի բազմագործառութային պետական քոլեջ Ընդհանուր առմամբ ներկայումս դուալ ուսուցմամբ կրթական ծրագրեր իրականացվում են 20 ՄԿՈՒ հաստատությունում 25 մասնագիտություններով: Այս մոդելով իրականացվող մասնագիտությունների մասնաբաժինը հասել է 17%-ի, իսկ ուսումնական հաստատություններինը՝ 23%-ի: Առաջիկայում նախատեսվում է իրականացնել տեքստիլ արդյունաբերության ոլորտի մասնագիտությունների գծով ԱՀՈՒ մոդելով ծրագրեր: Ներկայումս քննարկվում են այդ		

			ոլորտում մասնավոր հատվածի հետ համագործակցելու հնարավորությունները:		
14.	ՆՄՄԿ հաստատությունների մարդկային ռեսուրսների հզորացում	14.1 ՆՄՄԿ իրականացնող հաստատությունների վարչական, կառավարման խորհուրդների անդամների, տարբեր աշխատանքային խմբերում ներգրավված ճյուղային և ոլորտային միությունների ներկայացուցիչների, մանկավարժական անձնակազմի վերապատրաստում	ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների մանկավարժական անձնակազմի վերապատրաստման դասընթացին նախատեսված 655-ի փոխարեն հայտագրվել էին 938 մասնակից: Վերապատրաստման դասընթացին փաստացի մասնակցել են հայտագրված 938 մասնակցից 862-ը՝ որից 377-ը Երևանից, 485-ը ՀՀ մարզերից: Վերապատրաստման դասընթացն իրականացվել է «Մասնագիտական կրթական ծրագրերի կազմում և ներդրում» ծրագրի թեմաների շրջանակում. 1. Մասնագիտական կրթության ոլորտային որակավորումների շրջանակ, 2. Կրթական ծրագրերի կազմում, ուսումնառության գործընթացի պլանավորում, Կրթական ծրագրերի կազմում ԱՀՈՒ-ի համար, 3. ՈՒսանողի ակտիվ ուսումնառության ապահովում 4. Կարողությունների գնահատման մոտեցումների կատարելագործում, 5. Կանանց և տղամարդկանց իրավահավասարութ-յան հիմնախնդիրների հնարավոր դրսևորումները և դրանց կանխարգելման քայլերը, 6. Աղետների ռիսկի կառավարման կարողությունների ձևավորում և զարգացում: 2025 թվականին «ՄԱՎԵՏԱ» ծրագրի շրջանակում մասնագիտական և մեթոդական վերապատրաստումներ են կազմակերպվել ծրագրի 6 գործընկեր քոլեջների շուրջ 100 վարչական և մանկավարժական անձնակազմի համար: Նոյեմբերի 19-21-ը իրականացվել է տարբեր աշխատանքային խմբերում ներգրավված ճյուղային և ոլորտային միությունների նվազագույնը 31 ներկայացուցչի վերապատրաստում: 4-րդ եռամսյակում իրականացվել է արհեստագործական և միջին մասնագիտական հաստատությունների վարչական աշխատողների, կառավարման խորհուրդների շուրջ 48 անդամների վերապատրաստում՝ «Կոռուպցիայի կանխարգելումը կրթության միջոցով» թեմայով:		

		14.3 ՆՄՄԿ հաստատություն-ների մանկավարժական կազմի ատեստավորում Ժամկետ՝ 2024-2026թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ տասնօրյակ	ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի հունիսի 9-ի թիվ 1333-Ա2 հրամանով հաստատվել են ՀՀ արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների 2025 թվականի վերապատրաստման դասընթացի և ատեստավորման ուղղությունները: Համաձայն այդ հրամանի՝ 2025 թվականին վերապատրաստման և ատեստավորման ենթակա են «Տեքստիլ» ուղղությամբ դասավանդող մանկավարժական աշխատողները, ինչպես նաև միայն սեփական նախաձեռնությամբ ու միջոցներով վերապատրաստում անցնելու հնարավորությամբ ատեստավորման են ենթակա նաև «Ագրարային», «ՏՏ», «Ոսկերչություն» և «Խոհարարություն» ոլորտներիի ուղղությունների մասնագիտություններ դասավանդող մանկավարժական աշխատողները: 2025թ. վերապատրաստման գործընթացին մասնակցել է 64 անձ: Ատեստավորվել է 181 անձ: Ատեստավորումը հաղթահարած 146 մանկավարժներից 35-ը հաղթահարել է նվազագույն շեմը և կունենա դրույքաչափի փոփոխություն 200,000 դրամի չափով, իսկ 111 մանկավարժներ, որոնք գրանցել են 70%-ից բարձր արդյունքներ, ստանալու են նաև լրացուցիչ 30%, 40%, 50% հավելավճար՝ ըստ հավաքած միավորների: Քոլեջների հանրակրթական առարկաներ դասավանդող մանկավարժները 2023 թվականից հնարավորություն ունեն մասնակցելու հանրակրթական առարկաներ դասավանդող մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման գործընթացին: 2025 թվականին ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում հանրակրթական առարկաներ դասավանդող 131 մանկավարժ մասնակցել են ուսուցիչների կամավոր ատեստավորմանը: Ատեստավորումը հաղթահարած 69 մանկավարժից 13-ը հաղթահարել են նվազագույն շեմը և կունենան դրույքաչափի փոփոխություն, իսկ 56 մանկավարժ, որոնք գրանցել են 70%-ից բարձր արդյունքներ, կունենան և՛ դրույքաչափի փոփոխություն, և՛ կստանան հավելավճար: 2025թ. տարեվերջին քոլեջների մանկավարժների համար նույնպես ներդրվել է տարակարգի մեխանիզմ, որի արդյունքում քոլեջների մանկավարժներին կարող է շնորհվել եռաստիճան տարակարգ՝ մանկավարժական		

			դրույքի 20%, 30%, 50%-ի չափով հավելավճարի տրամադրման հնարավորությամբ: Ներկայացված 6 հայտերը ներկայումս փորձաքննության փուլում են:		
		14.5 Օտար լեզուներ դասավանդող մանկավարժական կազմի կարողությունների հզորացում, կատարելագործում, ուսումնական նյութերի արդիականացում Ժամկետ՝2025 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	ՄԿՈՒ զարգացման ազգային կետրոնի 2025թ. միջոցառումների ծրագրով դասընթացն իրականացվել է «ՄԿՈՒ պետական հաստատություններում անգլերեն լեզու դասավանդող մանկավարժների վերապատրաստում» ծրագրի թեմաներին համապատասխան, որին մասնակցել են 104 անգլերենի դասախոս և ստացել համապատասխան վկայականներ: Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ) կողմից մշակվել և տպագրվել է «Անգլերեն լեզվի ուսուցման մեթոդական գործիքակազմը տարբեր մասնագիտությունների և որակավորումների համար» ձեռնարկը, որը հաստատվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13.05.2025թ. թիվ 1089-Ա/2 հրամանով:		
	ՆՄՄԿ գրավչության, մատչելիության, բարձրացում, ներառականության ապահովում	15.2 Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատությունների շենքային պայմանների բարելավում	- Վանաձորի Կ. Ղարաքեշիշյանի անվան թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարանում հիմնանորոգման աշխատանքներն ավարտական փուլում են: - Երևանի թիվ 8 արհեստագործական պետական ուսումնարանում հիմնանորոգման աշխատանքներն ընթացքի մեջ են, շինարարական աշխատանքների ավարտը նախատեսվում է 2026 թվականին: Նախատեսվում է նաև մարզադաշտի նորոգում: - «Երևանի զարդարվեստի պետական արհեստագործական ուսումնարան» - շենքի քանդման և նորի կառուցման աշխատանքների նախագծանախա-հաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներն ընթացքում են: Շինարարությունը կմեկնարկի 2026 թվականին: - Նոր Գեղիի պետական գյուղատնտեսական քոլեջի մեկ մասնաշենքը վերակառուցման փուլում է: Շինարարական աշխատանքների ավարտը նախատեսվում է 2026 թվականին: Մյուս մասնաշենքի նախագծման աշխատանքները մեկնարկել են: - Գավառի ակ. Ա. Թամամշևի անվ. պետական գյուղատնտեսական քոլեջի շենքի կառուցման նախագծման աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026թ.:		

			- «Գորիսի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի /միավորված՝«Գորիսի պետական քոլեջ» և «Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպություններ/ նոր շենքի կառուցման շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026-2027 թթ: Շինարարական աշխատանքներին զուգահեռ իրականացվում են հանրակացարանի վերակառուցման /վերափոխում ուսումնական մասնաշենքի/ նախագծի մշակման աշխատանքները: - Նախատեսվում է Գյումրու պետական բժշկական քոլեջի շենքային պայմանների բարելավում: Հիմնանորգման նախագիծը համալիր փորձաքննման փուլում է: - Գավառի պետական բժշկական քոլեջի հիմնանորգման նախագիծը համալիր փորձաքննման փուլում է: - Երևանի պարարվեստի պետական քոլեջի հիմնանորգման նախագիծը համալիր փորձաքննության փուլում է: - Դիլիջանի պետական բազմագործառութային քոլեջի/միավորված՝Դիլիջանի պետական քոլեջ և Դիլիջանի պետական բժշկական քոլեջ/ հիմնանորոգման նախագիծը փորձաքննության փուլում է: - Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջի նոր շենքի կառուցման նախագծման աշխատանքները կմեկնարկեն 2026 թ. - Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական և Նոյեմբերյանի պետական քոլեջների նոր շենքերի նախագծերը լրամշակման փուլում են:		
17.	Բարձրագույն ուսում-նական հաստատություն-ներում ընդունելության սկզբունքների և մեխա-նիզմների վերանայում և ներառականության ընդլայնում	17.1 «ՀՀ կառավարության 2012 թ.-ի ապրիլի 26-ի 597-Ն որոշման մեջ փոփո-խություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում Ժամկետ՝ 2024թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ	ՀՀ կառավարության 2025 թվականի ապրիլի 17-ի N 449-Ն որոշմամբ 2025-2026 ուսումնական տարվա համար բարձրագույն կրթության համակարգում ազգային փոքրամասնությունների համար սահմանվել է 7 նպատակային տեղ և ևս 4 տեղ (պահուստային) հատկացվել է վճարովի համակարգ ընդունված ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ այն դիմորդներին, որոնք հաղթահարել են քննությունների ընհանուր առավելագույն միավորի 75%-ը (առնվազն 30 միավոր):		

		2025թ. հունիսի 3-րդ տասնօրյակ			
18.	Տարածաշրջանային լեզուներով կրթության ապահովում	18.2. «Համապատասխան ուսումնական տարիներին 2 կրթական ծրագրով մինչև 8 անվճար տեղերի հատկացում» ՀՀ կառավարության որոշման ընդունում Ժամկետ՝ 2023-2025թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ կառավարության 2025 թ. մայիսի 8-ի N 544-Ն որոշմամբ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների 2025/2026 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով «Ադրբեջանագիտություն» և «Վրացագիտություն» մասնագիտություններին հատկացվել են համապատասխանաբար 4-ական ընդունելության տեղեր: ՀՀ կառավարության 2025 թվականի ապրիլի 17-ի N 449-Ն որոշմամբ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների 2025/2026 ուսումնական տարվա՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով «Ադրբեջանագիտություն» մասնագիտութամբ հատկացվել է 5 անվճար տեղ:		
19.	Կրթական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի վերանայում՝ ուղղելով դեպի ուսումնառության վերջնարդյունքներ՝ որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համապատասխան	19.2 Կրթական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի վերանայում՝ որակավորումների ոլորտային շրջանակներից բխող կրթական վերջնարդյունքների հիմքով Ժամկետ՝ 2022-2025թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից կրթական ծրագրերը գնահատման և մշտադիտարկման արդյունքում պարբերաբար վերանայվում են: Այս գործընթացը կրում է շարունակական բնույթ՝ պայմանավորված յուրաքանչյուր ոլորտի բարեփոխումներով, նախանշված թիրախներով, ինչպես նաև աշխատաշուկայի փոփոխվող պահանջներով: Ուսումնառության վերջնարդյունքներին միտված կրթական ծրագրերը լրամշակվում են՝ հիմք ընդունելով ԿԳՄՍ նախարարի հրամաններով հաստատված որակավորումների ոլորտային շրջանակները (թվով 21՝ «Մաթեմատիկա», «Քիմիա», «Աշխարհագրություն», «Երկրաբանություն», «Սերվիս» և «Փիլիսոփայություն» որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրերի հիման վրա 2023-2024 ուսումնական տարվա մեկնարկին վերանայվել են Երևանի պետական համալսարանի համապատասխան որակավորումներ (բակալավր, մագիստրոս) շնորհող «Մաթեմատիկա», «Մաթեմատիկա և կիրառություններ», «Քիմիա», «Դեղագործական քիմիա»,		

			«Սննդի անվտանգություն», «Նյութագիտություն», «Աշխարհագրություն», «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Երկրաբանություն», «Ջրաօդերևութաբանություն», «Հասարակական աշխարհագրություն», «Երկրաֆիզիկա, ջրաերկրաբա-նություն, ճարտարագիտական երկրաբանություն», «Օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանություն և հետախուզում», «Սերվիս», «Փիլիսոփայություն») կրթական ծրագրերը: ՈԱՇ-ին և ՈՈՇ-ներին համապատասխանեցված կրթական ծրագրերի մասնաբաժինը ընդհանուրի մեջ կազմում է շուրջ 30%:		
20.	Ակադեմիական քաղաքի հիմնադրման հայեցակարգի մշակում	20.2 «Ակադեմիական քաղաքի հիմնադրման հայեցակարգից բխող միջոցառումների իրականացում Ժամկետ՝ 2024-2026թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Ակադեմիական քաղաքի հայեցակարգի շրջանակներում կատարվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես. • Մեկնարկել են Ակադեմիական քաղաքի տարածքի մաքրման աշխատանքները որի առաջին փուլով մաքրվել է 2.7 հա տարածք՝ ազատելով տարածքը շուրջ 10 000 խմ աղբից, աշխատանքի հաջորդ փուլերը կշարունակվեն արդեն 2026թ: • Ակադեմիական քաղաքի տարածքում մեկնարկել են նաև հնագույն բնակատեղիի և դամբարանադաշտերի պեղումները, որոնգ առաջին արդյունքները վկայում են, որ Ակադեմիական քաղաքում կարող է ձևավորվել նաև պատմամշակութային ժառանգության եզակի միջավայր: 2025թ. վերջնականացվել են նաև տարածքում գտնվող բարձրավոլտ էլեկտրասյուների տեղափոխության, ինչպես նաև տարածքին մոտեցող ենթակառուցվածքների նախագծման աշխատանքների տեխնիկական պահանջները, որոնց հիման վրա 2026 թվականից կմեկնարկեն դրանց նախագծման աշխատանքները: • ՋիԷմՓի գերմանական կազմակերպության և տեղական գործընկեր կազմակերպության հետ կնքված պայմանագրի շրջանակում իրականացվել է Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի սխեմատիկ նախագծումը, մեկնարկել է Ակադեմիական քաղաքի քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակի մշակումը գերմանական RSUP ընկերության հետ կնքված պայմանագրով, որը ներառում է սոցիալ-տնտեսական,		

			քաղաքաշինական զարգացման մոդելները, ինչպես նաև գույքերի կառավարման առաջարկները, • ԲԿԳ կոմիտեի, ՅուՍիէլ Քընսալթանթս Լիմիթիդ և Ակադեմիական քաղաք հիմնադրամի միջև կնքվել է պայմանագիր, որի շրջանակներում Լոնդոնի համալսարանական քոլեջի (UCL) «ՅուՍիէլ Քընսալթանթս Լիմիթիդ» դուստր կազմակերպությունը մատուցում է մասնագիտական խորհրդատվության ծառայություններ՝ Ակադեմիական քաղաքի կրթական կլաստերի ձևավորմանն ուղղված աշխատանքներն իրականացնելու համար: • Գլխավոր հատակագծի մշակման շրջանակներում իրականացվել է նաև Ակադեմիական քաղաքի տրանսպորտային շարժունակության նախագծի մշակում՝ իտալական Սիստեմատիկա ընկերության հետ կնքված պայմանագրի շրջանակում, որը ներառում է նաև Ակադեմիական քաղաքի տրանսպորտային ներքին ցանցի և արտաքին տրանսպորտային համակարգերի հետ կապակցվածության ուսումնասիրությունն ու հայեցակարգի մշակումը: • Իրականացվել է Ակադեմիական քաղաքի քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակի մշակումը՝ գերմանական RSUP ընկերության հետ կնքված պայմանագրով, որը ներառում է սոցիալ-տնտեսական, քաղաքաշինական զարգացման մոդելները, գույքերի կառավարման առաջարկները, շահառուների հետ հաղորդակցման ռազմավարությունը և ծրագրի ռիսկերի կառավարման սխեման, • Մյունխենի տեխնիկական համալսարանի կողմից մշակվել և ներկայացվել է տեխնոլոգիական կլաստերի ուղղությամբ Ակադեմիական քաղաքի կառավարման շրջանակի, նորարարությունների կառավարման մոդելի, բուհերի և հետազոտական ինստիտուտների խոշորացման հայեցակարգը, • Կրթական կլաստերի ուղղությամբ պայմանագիր է ստորագրվել Լոնդոնի համալսարանական քոլեջի		

			կրթական ինստիտուտի (UCL IoE) դուստր կազմակերպություն «ՅուՍիէլ Քընսալթանթս Լիմիթիդ»-ի հետ, որը սկսել է խորհրդատվական աշխատանքները Ակադեմիական քաղաքի կրթական կլաստերի ձևավորման ուղղությամբ, • Արվեստների կլաստերի ուղղությամբ վերջնականացվել է 2023թ. նոյեմբերին Լոնդոնի արվեստների համալսարանի հետ արդեն իսկ ձևավորված համագործակցության հիման վրա պայմանագիրը, 2025թ. մայիսին արվեստների կլաստերի ուղղությամբ աշխատանքներին հավելվել է Շոտլանդիայի թագավորական կոնսերվատորիայի հետ (կատարողական արվեստի ոլորտում QS World Rankings 2025 վարկանիշավորման ցանկի համաձայն աշխարհի տասը լավագույն կրթական հաստատություններից մեկն է) կնքված մտադրությունների նամակը: • Ակադեմիական քաղաք ծրագրի շուրջ հանրային իրազեկումը բարձրացնելու նպատակով 2025թ. հոկտեմբերին «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի կողմից իրականացվել է լայնածավալ տեղեկատվական արշավ Հայաստանի 10 մարզերի 14 քաղաքներում, որոնց մասնակիցների քանակը եղել է ավելի քան 17.000 մարդ, միևնույն ժամանակ տեղեկատվական արշավի նյութերն ունեցել են մոտ 1 մլն դիտում սոցիալական հարթակներում: • Երևանում 2025թ. հոկտեմբերի 20-21-ին տեղի է ունեցել «Ակադեմիական քաղաք Հայաստան. գիտելիքի միջազգային ֆորումը»: Այն նպատակ ուներ միավորելու բարձրագույն կրթության և հետազոտությունների ոլորտների քաղաքականություն մշակող մարմիններին, միջազգային կազմակերպություններին, ակադեմիական առաջնորդներին և փորձագետներին՝ քննարկելու բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում զարգացման գլոբալ միտումները և փոխակերպումները: Ֆորումին մասնակցել են շուրջ 1000 մասնակիցներ, իսկ դրա վերաբերյալ նյութերն ունեցել են շուրջ 1 մլն դիտում սոցիալական ցանցերում:		

21.	Բարձրագույն կրթության շարունակական բարելավում, բարձրագույն կրթության մեջ հետազոտական բաղադրիչի շարունակական մեծացում	21.1 Ծրագրային հավատարմագրման չափանիշների վերանայում և իրականացում Ժամկետ՝2025թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	2025 թ.սեպտեմբերի 11-ին ընդունված և հոկտեմբերի 20-ին ուժի մեջ մտած «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի հիմնական հասկացություններում սահմանվում է *կրթական ծրագիր* հասկացությունը, ինչպես նաև *ծրագրային հավատարմագրում* հասկացությունը, որը որակի արտաքին գնահատման և հավաստման համակարգված գործընթաց է: Միաժամանակ, նույն օրենքի 19-րդ հոդվածով սահմանվում են բուհերի ծրագրային և ինստիտուցիոնալ հավատարմագրման պայմանները. Հոդվածով պայմանները, այդ թվում՝ հետազոտական բաղադրիչի պարտադիր պահանջը, իրենց արտացոլումը կգտնեն ծրագրային հավատարմագրման չափանիշներում՝ ապահովելով բարձրագույն կրթության որակի շարունակական բարելավումը և բարձրագույն կրթության մեջ հետազոտական բաղադրիչի ընդլայնումը: Վերոնշյալ պահանջների ամբողջական կիրառումն ապահովելու նպատակով՝ ինչպես նաև համապատասխան պայմանները սահմանելու համար, օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետի հիմքով «Բուհերի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման կարգը հաստատելու մասին» և «Բարձրագույն ուսումնական հաստատությունների և կրթական ծրագրերի լիցենզավորման կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը սահմանված վերջնաժամկետով ներառվել են ««Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծում, որը և ՀՀ վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի և իրավաբանական վարչությունների եզրակացությունների հիման վրա լրամշակվել և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025 թ. դեկտեմբերի 15-ի N 01/9.1.1/41965-2025 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:		
22.	Բնագիտական ուղղություններով բարձրագույն կրթության որակի զարգացում՝ պետական աջակցության	22.1 Միջբուհական և միջառարկայական փորձարարական թեմատիկ լաբերի ստեղծում և ծրագրերի իրագործում	Բուհերում ստեղծվել կամ արդիականացվել են մի շարք լաբորատորիաներ, մասնավորապես ԲՏՃՄ և բարձր տեխնոլոգիաներ, գյուղատնտեսական նորարարություն, բժշկություն և առողջապահություն, սպորտ և կիրառական		

	և ինստիտուցիոնալ ներդրումների միջոցով այն հասցնելով միջազգային մակարդակի	Ժամկետ՝ 2025թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	գիտություններ, արվեստ և ստեղծարարություն ուղղություններով: • Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ստեղծվել է ինտեգրալ սխեմաների նախագծման և մոդելավորման ուսումնական ու գիտահետազոտական լաբորատորիա: • ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում բացվել է Սպեկտրոսկոպիայի և քրոմատոգրաֆիայի լաբորատորիա, որը կծառայի որպես գիտական և ուսումնական հետազոտությունների հարթակ՝ նպաստելով ժամանակի պահանջներին համահունչ ուսումնասիրությունների կատարմանը: • Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում ստեղծվել են՝ Շինարարական ֆակուլտետում՝ Ջրի մաքրման լաբորատորիա,Կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետում՝ «Սարքերի ինտերնետ (IoT) լաբորատորիա»,Քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետում՝ «Տրանսպորտային էկոլոգիայի գիտահետազոտական պրոբլե մային լաբորատորիա», Շենքերի տեղեկատվական մոդելավորման (ՇՏՄ-BIM) կենտրոն: • Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում մայիսին ՀԱՊՀ-ի, «Քեյդնս» և «Սիսկո» ընկերությունների համագործակցության արդյունքում և «Արփա» հիմնարկ բարեգործական ընկերության աջակցությամբ համալսարանի «Էլեկտրոնիկա, կենսաբժշկական և չափիչ համակարգեր» ամբիոնում ստեղծվել է ինտեգրալ սխեմաների նախագծման և մոդելավորման ուսումնական ու գիտահետազոտական լաբորատորիա: • Հայաստանի ազգային ագրարային համալսարանում ստեղծված են 48 գիտակրթական և ուսումնափորձնական լաբորատորիաներ, որտեղ իրականացվում են տարբեր կրթական աստիճանի կրթական ծրագրերի լաբորատոր և գործնական պարապմունքները, գործում է միջամբիոնային անասնաբուժական կլինիկա, հունվարի 14-ից Սիսիանի		

			մասնաճյուղի Խելացի գյուղատնտեսության կենտրոնում բացվել է խելացի անասնաշենքը, ինչպես նաև նոր ուսումնական տարուց շահագործվելու է «Գյուղատնտեսական ռոբոտաշինության և մեխատրոնի կայի ագրարային ճարտարագիտության գերազանցության կենտրոնը»: • Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավար ժական համալսարանում գործում են բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա (ԲՏՃՄ) ոլորտի գերազանցության եզակի կենտրոնի շրջանակում ստեղծված 6 լաբորատորիաները և 2 ենթակառուցվածքային կենտրոնները: Ֆիզիկայի, կենսաբանության, քիմիայի, տեխնոլոգիայի, աշխարհագրության և SS լաբորատորիաները ամբողջությամբ հագեցած են ժամանակակից սարքավորումներով, տեխնիկայով և անհրաժեշտ ուսումնական գույքով: Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանը համագործակցում է Ռուսաստանի Դաշնության, Չինաստանի, Կորեայի, Ավստրիայի, Գերմանիայի, Իսպանիայի, Իտալիայի, Բելգիայի, Մեծ Բրիտանիայի և այլ երկրների համալսարանների, բարձրագույն դպրոցների, պետական և մասնավոր կառույցների հետ: Բուհն իրականացնում է նաև համատեղ մագիստրոսական, դոկտորական ծրագրեր Ֆրանսիայում գործող 4 համալսարանների, Գերմանիայի Դաշնության Հալլե-Վիթենբերգի Մարտին Լյութերի համալսարանի, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Դալիանի օտար լեզուների համալսարանի հետ «Համեմատական գրականություն», «Քաղաքագիտություն», «Մասնագիտական մանկավարժություն (չինարեն և գրականություն)» մասնագիտություններով: • ՀՀ պետական կառավարման ակադեմիայում «Միջազգային համագործակցության և զարգացման կենտրոն»ի աջակցությամբ SMARTI ծրագրի շրջանակում ստեղծվել ու ֆունկցիոնալ գործարկման փուլում է գտնվում EMI կենտրոնը: Նոր միջազգային ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռնարկատիրական հաբի բացում: Հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնում		

			մշակվում են երկու գիտական թեմաների ռազմավարություններ, որոնք ենթադրում են գիտական սարքավորումների առկայություն: • Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում գործում է «ՔՈԲՐԵՅՆ» ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոնը: Համալսարանի ամբիոններում առկա են ուսումնագիտական գործընթացն ապահովող այլ լաբորատորիաներ և 2 մեծ սիմուլյացիոն կենտրոն: • Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում իրականացվում են աշխատանքներ վերստեղծվող նկարահանումների կանաչ տաղավարի նորոգման և տեխնիկական վերազինման համար, ինչպես նաև գունաշփման տաղավար ստեղծելու և այն համապատասխան տեխնիկայով ապահովելու համար: • Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղում ՀԲԸՄ Հայաստանի «Կատապուլտ» ստեղծարար աքսելերացիոն ծրագրի շրջանակներում բացվել է Ֆաբ Լաբ թվային արտադրության լաբորատորիան, որը ստեղծում է արվեստի ոլորտում նորարարության և ստեղծարարության հարթակ և հիմնված է երեք կրթական ծրագրերի վրա՝ *Ֆաբ Ակադեմիա – MIT (Massachusetts Institute of Technology)-ի մշակած ծրագիր՝ ստեղծելու գրեթե ամեն ինչ թվային արտադրության գործիքներով, *Ֆաբրիկադեմիա – հետազոտական կրթական ծրագիր՝ թվային արտադրության, տեքստիլի և կենսաբանության խաչմերուկում, *Ֆաբ Ուսումնական Ակադեմիա - մանկավարժների վերա-պատրաստում՝ թվային գործիքներն ուսումնական պլանում ինտեգրելու համար: • Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում՝ Մեդիալաբորատորիա, Կինեզիոլաբ ուսումնաառողջարարական լաբորա-տորիա, սպորտային տուրիզմի լաբորատորիա, Ինտերակտիվ լսարան: «Սպորտ ԿԱԲ» գիտահետազոտական կենտրոնը իրականացնում է համատեղ հետազոտություններ		

			մարզական ֆեդերացիաների, կլինիկաների, ՀՖԿՍՊԻ տարբեր մասնագիտական ամբիոնների, ինչպես նաև այլ բուհերի (ԵՊԲՀ, ԵԲՀ, ԵՀՀ) հետ: • Գավառի պետական համալսարանում «Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահ պանություն)» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար» եռամյա ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում տեղակայվել է միջհամալսարանական կրթական և գիտահետազոտական եզակի լաբորատորիա (ERLEP): • Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի կողմից բազային ֆինանսավորման շրջանակում գործող «Նանո և միկրոտեխնիկայի նյութերի և կառուցվածքների մեխանիկայի պրոբլեմային լաբորատորիա», ՇՊՀ-ի ներբուհական դրամաշնորհի շրջանակում գործող «Մաթեմատիկայի և ֆիզիկայի շարունակական կրթության պրոբլեմային գիտամանկավարժական լաբորատորիա», Արդիական սարքավորումներով կահավորված կենսատեխնոլոգիայի լաբորատորիա: Վերոնշյալ լաբորատորիաներն իրականացնում են նորարար գիտահետազոտական գործունեություն: • Գորիսի պետական համալսարանում առկա են. «Քաղաքացիական կրթություն», «Կայուն ճարտարապետական ժառանգություն», «Անգլերենը որպես դասավանդման լեզու» և «Կանաչ կրթություն» կենտրոնները: • Հայաստանի եվրոպական համալսարանում գործում են 2 կլինիկաներ՝ հոգեբանության ամբիոնին և իրավագիտության ամբիոնին կից: • «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանում՝ Սիմուլյացյոն ուսուցումը մասնագիտական ուսուցման, պրակտիկայի վրա հիմնված վերապատրաստման և հիվանդների հետ աշխատելու շրջանավարտների պատրաստակամության օբյեկտիվ գնահատման համակարգում ինտեգրելու նպատակով ստեղծվել է սիմուլյացիոն կենտրոն:		

			• Ավանդական բժշկության համալսարանում գործում են համագործակցության պայմանագրեր, ընթացքի մեջ են Երևանի պետական համալսարանի և Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի հետ նոր պայմանագրերի կնքման գործընթացները, նորակառույց մասնաշենքերում նախատեսվում է 5 ուսումնագիտական լաբորատորիաներ: • Եվրասիա միջազգային համալսարանի Ֆարմացիայի ամբիոնին կից գործում են թվով 7 լաբորատորիաներ (քիմիայի, ֆիզիկայի, անատոմիայի և ֆիզիոլոգիայի, մանրէաբանության, ֆարմակոգնոզիայի և բուսաբանության, դեղերի տեխնոլոգիայի և հյուսվածքաբանության): Լրագրության ամբիոնին կից ARMDOCT նախագծի շրջանակներում ձևավորել է նաև մեդիա լաբորատորիա: Առաջիկայում ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ կգործարկվի «Իրավաբանական կլինիկան»:		
		22.2 Բնագիտական ուղղություններով պետական աջակցությամբ ֆինանսավորման նոր մեթոդաբանության մշակում մեկ ուսանողի հաշվարկով: ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում Ժամկետ՝ 2025թ. մարտի 3-րդ տասնօրյակ	Բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում անհրաժեշտ քաղաքականության մշակման համար «Բարձրագույն կրթության և գիտության մասին» 2025 թվականի սեպտեմբերի 11-ի ՀՕ-285-Ն օրենքի 39-րդ հոդվածով սահմանվել են իրավական հիմքեր, մասնավորապես, բուհերին պետական բյուջեից աջակցության տրամադրման նոր ֆինանսավորման ձևեր. - ինստիտուցիոնալ ֆինանսավորում, - կրթաթոշակների տրամադրում, - դրամաշնորհային ֆինանսավորում, - թիրախային ֆինանսավորում: Միաժամանակ հիմք ընդունելով օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ և 15-րդ կետերը՝ «Պետության կողմից ուսանողներին տրամադրվող կրթաթոշակների տրամադրման կարգը հաստատելու մասին» և «Հանրային բուհերին տրամադրվող բազային և թիրախային ֆինանսավորման ձևերը և կարգերը, կատարողականի ցուցանիշների ձևավորման սկզբունքները և ֆինանսավորման կարգավորման կատարողականի վրա հիմնված մեխանիզմները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծերը համապատասխան վերջնաժամկետով ներառվել են		

			«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծում, որը և ՀՀ վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի և իրավաբանական վարչությունների եզրակացությունների հիման վրա լրամշակվել և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025 թ. դեկտեմբերի 15-ի N 01/9.1.1/41965-2025 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:		
23.	Բարձրագույն կրթության միջազգայնացման, շարժունության հնարավորությունների ընդլայնում	23.1 Առանձին դասընթացների կամ դասընթացների առան-ձին թեմաների, ուսումնական մոդուլների և կրթական ծրագրերի՝ օտար լեզվով դասավանդելու հնարավորու-թյան ապահովում Ժամկետ՝ 2025 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	Բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից (Երևանի պետական համալսարան, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Բրյուսովի անվան պետական համալսարան, Ռուս-հայկական համալսարան, ՀՊՏՀ և այլն) իրականացվող կրթական ծրագրերի շրջանակներում առանձին դասընթացներ, ուսումնական մոդուլներ իրականացվում են օտար լեզուներով՝ հիմք ընդունելով տվյալ կրթական ծրագրերի մասնագրերով սահմանված պահանջները և նախատեսված վերջնարդյունքները: Բարձրագույն ուսումնական հաստատություններում օտար լեզուներով կրթության կազմակերպման համար ավելի մեծ հնարավորություններ ստեղծելու նպատակով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» 2025 թ. սեպտեմբերի 11-ի ՀՕ-285-Ն օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ և 18-րդ մասով սահմանված են բարձրագույն կրթության առաջինից երրորդ մակարդակների կրթական ծրագրերում օտար լեզվով ուսուցման կազմակերպման պայմանները:		
24.	Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) անդամակցությամբ պայմանավորված բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումներ	24.1 ՀՀ ներկայացուցիչների մասնակցություն Բոլոնիայի հետամուտ խմբի և աշխատանքային խմբերի հանդիպումներին Ժամկետ՝ 2022-2025թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	2025 թվականի ընթացքում ապահովվել է մասնակցությունը Բոլոնիայի հետամուտ խմբի և աշխատանքային խմբերի շրջանակներում կազմակերպված բոլոր հանդիպումներին:		

25.	ՀՀ-ում ոչ ֆորմալ կրթության զարգացում և տարածում. ոչ ֆորմալ կրթության արդյունքների ճանաչում	25.2 Ոչ ֆորմալ կրթության (ներառյալ՝ երիտասարդների և մեծահասակների ուսումնառության և կրթության) իրազեկվածության բարձրացում հասարակության շրջանում ոլորտի ջատագովության, հանրային արշավների իրականացման միջոցով Ժամկետ՝ 2025թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	-2024թ. նոյեմբերի 9-ից ԴՎՎ Ինտերնաշանալի ֆինանանսավորմամբ՝ կրթության համակարգում ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության կարագավորումները արդյունավետորեն ներդնելու, ուսուցում իրականացնողների ուսումնամեթոդական հմտությունները կատարելագործելու և զարգացնելու նպատակով Ուսուցման ազգային հիմնադրամը (ՈՒԱՀ) նախաձեռնել է «Կրթության մասին» օրենքի փոփոխությունների վերաբերյալ իրազեկման դասընթացների շարք և ոչ ֆորմալ կրթության համակարգի մեթոդական թիմերի մասնագիտական վերապատրաստում: -Հուլիսի 15-ին տեղի է ունեցել «ԿրթաԲ.Ա.Ց Ստեփանավան» մեծահասակների ուսումնառության և կրթության կենտրոնի (ՄՈՒԿ) բացման հանդիսավոր արարողությունը: Ստեփանավանի խոշորացված համայնքը մասնակցել է նմանատիպ կենտրոն ստեղծելու մրցույթին, ներկայացրել հաղթող հայտ և համագործակցություն հիմնել ԴԻ-ՎԻ-ՎԻ Ինթերնեյշնալի հետ: Առաջիկա ամիսներին կենտրոնում իրականացվել են բազմապրոֆիլ ծրագրեր, այդ թվում՝ դասընթացներ և համայնքային միջոցառումներ: -ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի հունիսի 16-ի N 51-Ն հրամանով հաստատվել է «Լրացուցիչ կրթության մոդուլային ծրագրերի երաշխավորման կարգ»: 2025 թվականի ընթացքում երաշխավորված ոչ ֆորմալ կրթական ծրագրերի թիվը կազմել է 656: -Հոկտեմբերի 15-16-ը ՀՀ ԿԳՄՍ-ն իր մասնակցությունն է ցուցաբերել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շանհայ քաղաքում կայացած «Ասիական տարածաշրջանում մեծահասակների ուսուցման և կրթության մասին վեցերորդ գլոբալ զեկույցի (GRALE) վերաբերյալ կարողությունների զարգացման աշխատաժողով»-ին: -Գործող երիտասարդական կենտրոններում երիտասարդական աշխատողների կողմից ոչ ֆորմալ կրթական մեթոդներով իրականացվել են պետական երիտասարդական քաղաքականությանը համահունչ՝ երիտասարդների կարողությունների և հմտությունների զարգացմանն ուղղված ծրագրեր, ինչպիսիք են ֆինանսական գրագիտություն, մեդիագրագիտություն,		

			առողջ ապրելակերպ, բնակչության պաշտպանություն և առաջին օգնություն, մասնագիտական կողմնորոշում և այլն:		
27.	Մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացում	27.1 Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինում Ժամկետ՝ 2022-2026թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից 2023 և 2024 թվականների ընթացքում ՀՀ ԿԳՄՍ նախարարի 15.05.2023թ. N 691-Ա/2, 07.11.2023թ. N 2326-Ա/2 հրամանների համաձայն ձեռք բերված սարքերի (սարքավորումների) նվիրաբերության նպատակով՝ ՀՀ կառավարության 2025 թվականի հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններին և գիտական կազմակերպություններին սարքեր (սարքավորումներ) նվիրաբերելու մասին» N 974-Ա որոշման համաձայն Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և վերոնշյալ որոշման հավելվածում նշված 14 շահառու կազմակերպությունների միջև կնքվել են սարքերի (սարքավորումների) նվիրաբերության մասին 40 պայմանագրեր:		
28.	Գիտության ոլորտում աշխատողների որակա-վորման բարձրացում և երիտասարդ կադրերի ներգրավում	28.1 Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտություններին աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացում Ժամկետ՝ 2022-2026 թթ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի հունիսի 10-ի N 1346-Ա/2 հրամանով գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կազմակերպվել է «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2025» մրցույթը: Մրցույթին ներկայացվել են 84 հայտեր, որոնցից 52-ը՝ բուհերից, 30-ը՝ ՀՀ ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպություններից, 2-ը՝ Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայից: ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի հոկտեմբերի 24-ի N 2509-Ա/2 հրամանով հաստատվել են մրցույթի արդյունքները: Ֆինանսավորման են երաշխավորվել 79 գիտական նախագծեր, որոնցից 50-ը՝ բուհերից, 27-ը՝ ՀՀ ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպություններից և 2-ը՝ Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայից: ԲԿԳԿ գիտական կազմակերպությունների (բուհերի) և մրցույթի շահառուների միջև կնքվելու են «Գիտական և		

			գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագրեր՝ 2025 թվականի նոյեմբերի 1-ից թեմաների ֆինանսավորումը սկսելու նպատակով:	
		28.2 Հետդոկտորական հետազոտությունների ծրագրերի իրականացում Ժամկետ՝ 2022-2026թթ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	ԲԿԳԿ-ի կողմից ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի մայիսի 2-ի N 1008-Ա/2 հրամանի համաձայն կազմակերպվել է «Մասնագիտական վերապատրաստում 2025» մրցույթը (հայտատուների 3 խումբ), որի շրջանակում ներկայացվել է 49 հայտ: Ներկայացված հայտերից 38-ը, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի հոկտեմբերի 9-ի N 2409-Ա/2 հրամանի համաձայն ֆինանսավորման են երաշխավորվել, որոնցից 9-ը վերաբերում են 3-րդ խմբին, այն է՝ 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված, գիտական աստիճան ունեցող և գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող անձանց: Միաժամանակ, 2025 թվականին շարունակվել է 20 ծրագրի ֆինանսավորումը (9-ը՝ 2025 թվականին մեկնարկած, 7–ը և 4-ը՝ 2024 թվականին):	
		28.3 Արտերկրի լավագույն գիտական կենտրոններում գիտական կազմակերպու-թյունների աշխատակիցների մասնագիտական վերապատ-րաստման և որակավորման բարձրացման իրականացում Ժամկետ՝ 2023-2026թթ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորում» ծրագրի շրջանակում գործող գիտական կազմակերպությունների և բուհերի աշխատակիցների, այդ թվում՝ երիտասարդ գիտական կադրերի մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով, ԲԿԳԿ-ի կողմից՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025 թ. մայիսի 2-ի N 1008-Ա/2 հրամանի համաձայն, կազմակերպվել է «Մասնագիտական վերապատրաստում 2025» մրցույթը՝ հետևյալ երեք խմբերով. · մագիստրատուրայի ուսանողներ (խումբ 1), · 1990 թ. հունվարի 1-ից հետո ծնված ասպիրանտներ կամ հայցորդներ (խումբ 2), · 1974 թ. հունվարի 1-ից հետո ծնված, գիտական աստիճան ունեցող և գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող անձինք (խումբ 3): Մրցույթի շրջանակում ներկայացվել է 49 հայտ, որոնցից 38-ը, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի հոկտեմբերի	

			9-ի N 2409-Ա/2 հրամանի համաձայն ֆինանսավորման են երաշխավորվել: Շարունակվում է շուրջ 69 ծրագրի ֆինանսավորումը, այդ թվում՝ 38 ծրագիր 2025 թվականին, 13 և 17 ծրագիր 2024 թվականին մեկնարկած:	
29.	Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում	29.1 Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձերի նորմավորման գործընթացի իրականացում Ժամկետ՝ 2022-2025թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	2025 թ. շարունակվել է գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական և ճարտարագիտական աշխատողների աշխատավարձերի բարձրացման՝ 2022 թվականից մեկնարկած գործընթացը, որի արդյունքում 2018-2021 թթ. գիտական և ճարտարագիտական աշխատողների յուրաքանչյուր տարակարգի միջին աշխատավարձի նկատմամբ արդեն իսկ գրանցվել է աշխատավարձի ավելացում 78%-ից մինչև 300%:	
		29.4 Վերաինտեգրման կամ հեռավար ղեկավարվող լաբորատորիաների ստեղծում Ժամկետ՝ 2022-2026թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	2025 թ. գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կազմակերպվել են. • «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2025» մրցույթ, որի արդյունքում ընտրվել է արտերկրի գիտնականների ղեկավարությամբ ՀՀ պետական գիտական կազմակերպությունում հեռանկարային, ժամանակակից գիտական ուղղություններով նոր ստորաբաժանումներ ստեղծմանն ուղղված 12 հնգամյա նախագիծ՝ 5 տարվա կտրվածքով մինչև 130 միլիոն ՀՀ դրամ բյուջեով: • «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրում 2025/1» մրցույթը, որի արդյունքում ֆինանսավորման է երաշխավորվել 3 նախագիծ՝ 60 ամիս տևողությամբ: • «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia 2025»» մրցույթ, որի արդյունքում 2 գիտնական առաջիկա երկու տարիներին կտեղափոխվեն ՀՀ և կծավալեն գիտական գործունեություն ՀՀ գիտական կազմակերպություններում:	

			Հաշվի առնելով մրցույթների շարունակականությունը՝ հայտարարվել են «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրում 2025/2» և «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia 2025/2»» մրցույթները, որոնց շրջանակներում ներկայացվել են համապատասխանաբար 8 և 7 հայտեր: Ներկայացված հայտերից 6 և 4 նախագծերը ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի հոկտեմբերի 31-ի N 2551-Ա/2 և N 2550-Ա/2 հրամանների համաձայն երաշխավորվել են ֆինանսավորման:	
33.	Հայ մշակույթի հանրահռչակում, հանրային լայն մասնակցության ապահովում մշակութային կյանքին	33.1 Թանգարաններում և գրադարաններում կրթական ծրագրերի իրականացում Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայության թանգարաններում իրականացվել են 1824 կրթական ծրագրեր, որոնց մասնակցների թիվը 33847 է, որից 924-ը սահմանափակ կարողություններով անձինք: Գրադարաններում իրականացվել է 117 կրթական ծրագիր՝ 10793 մասնակից, որից՝ 619-ը սահմանափակ կարողություններով անձիք:	
		33.2 Հուշարձանների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում Ժամկետ՝ 2022-2026թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	- Եվրոպական հնագիտության օրերին նվիրված միջոցառումների շրջանակում «Եվրոպական ժառանգության երիտասարդ կերտողները» մանկապատանեկան ստեղծագործական մրցույթի մասնակից դպրոցականները այցելել են «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարան: Դպրոցականները ծանոթացել են նաև թանգարանում անցկացվող կրթական ծրագրերին, մասնակցել «Արի խաղանք հնագիտություն» կրթական ծրագրին: -«Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարանում տեղի է ունեցել Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ բացառիկ ցուցադրություն՝ «Լույսի ու խավարի պայքարը» խորագրով, որտեղ ցուցադրվել է «Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարանից հայտնաբերված ցլի մարմարե գլուխը: -Երևանում իրականացվել է «Լուծումներ համագործակցության միջոցով. մարտահրավերները և նորարարական պրակտիկան թանգարաններում»	

			խորագրով «Գոտի և ճանապարհ» թանգարանային համաժողովը: -«Զորաց քարեր» բնակատեղի» պատմամշակութային արգելոցում օգոստոսի 10-ի լույս 11-ի գիշերը կայացել է «Նավասարդ»-ին նվիրված մշակութային միջոցառում: -«Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանում տեղի է ունեցել «Տաճարի մեղեդին» խորագրով դասական երաժշտության երեկո՝ դաշնամուրային և ակորդեոնային կատարումներով: -«Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է «Արհեստների և արվեստների փառատոն Դիլիջանում» մշակութային փառատոն, որի ընթացքում ներկայացվել է կազմակերպության կրթական ծրագրերը և հրատարակած գրքերը: - «Եվրոպական ժառանգության օրեր» միջոցառման ավարտին կայացել է՝ պետություն-մասնավոր համագործակցությամբ վերականգնված Երևանի «Կարմիր կամուրջ» հուշարձանի բացման պաշտոնական արարողությունը: - Սեպտեմբերի 21-ին՝ ՀՀ Տավուշի մարզի սահմանապահ Բերդ համայնքից 21 աշակերտ մասնակցել է հայրենաճանաչողական ճամբարի: «Ամրոցաշինությունից բանակաշինություն» գաղափարի ներքո «Օպերացիա Բերդ» ճամբարի մասնակիցները ծանոթացել են իրենց տարածաշրջանի պատմամշակութային հուշարձանների հետ, լսել միջնադարյան ամրոցների կառուցվածքի հետ կապված մանրամասներ մասնագետների մատուցմամբ, քննարկել միջնադարյան և ժամանակակից պաշտպանական համակարգերի առանձնահատկությունները, ինտերակտիվ խաղերի, արշավների և գործնական առաջադրանքների միջոցով զարգացրել են թիմային աշխատանքի հմտություններ: -Հոկտեմբերի 1-ին «Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանում կայացել է «Հառիճի պատմամշակութային ժառանգությունը» խորագրով ցուցահանդեսի բացումը: -«Արփի» բնապատմական արգելոցում կազմակերպվել է ազգային երգի և պարի միջոցառումը:	

		-«Գոշավանք» պատմաճարտարապետական արգելոցում իրականացվել է հայկական թեյի պատրաստման և հյուրասիրման միջոցառումը: -«Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանում իրականացվել է «Մեծամոր. Ժամանակի ոսկե հետքը» խորագրով միջոցառում-ցուցադրություն՝ նվիրված «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանի հիմնադրամն 55 ամյակին, «Մեծամոր»-ի արշավախմբի 60 ամյակին: Նախատեսված է «Մեծամոր»-ի հնավայրից պեղված ոսկու ցուցադրություն, կրկնօրինակների ներկայացում: - Իրականացվել են 101 կրթական ծրագրեր, 73 տեղեկատվական արշավներ, 125 արտաքին գովազդի հարթակներ և 16 գիտաժողով:	
	33.3 Հայաստանում միջազգային և հանրապետական փառատոների և մրցույթների, ստեղծագործական նախագծերի, ցուցահանդեսների իրականացում (այդ թվում՝ Դաշտադեմի ամրոցում «Զարկ ֆեստ» (Յարխուշտա), ազգային փոքրամասնությունների մասնակցությամբ փառատոների իրականացում) Ժամկետ՝ 2022-2026 թթ. Դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Հունիսի 21-22-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում տեղի է ունեցել «Արհեստների միջազգային 4-րդ փառատոնը», որին մասնակցել են 40 արհեստագործ վարպետ Հայաստանից և արտերկրից, իրականացվել է 12 վարպետության դաս, ելույթ են ունեցել 2 ստեղծագործական խումբ, շահառուների թիվը՝ 12.000: ՀՀ-ում իրականացվել են 18 միջազգային և 5 հանրապետական փառատոներ և մրցույթներ, բիենալե և պլեներ: Ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոնի կողմից իրականացվել է լայնամասշտաբ, ՀՀ մարզերի ընդգրկվածությամբ պարային-համերգային միջոցառումներ: Իրականացվել են նաև 50 ստեղծագործական նախագծեր: Հոկտեմբերի 5-ին՝ ք. Ապարանի մշակույթի տանը իրականացվել է «Տանիքը՝ Հայաստան» մշակութային նախագիծ ազգային փոքրամասնությունների մասնակցությամբ» ծրագիրը:	
	33.5 Համայնքներում ոչ նյութական մշակութային ժառանգության իրազեկման և կրթամշակութային ծրագրերի իրականացում	ՀՀ 8 մարզերի 30 համայնքներում ոչ նյութական մշակութային ժառանգության իրազեկման և կրթամշակութային ծրագրերի իրականացման նպատակով իրականացվել է 5 ծրագիր: - ՀՀ Տավուշի և Լոռու մարզերի 7 համայնքերի 200-ից ավել շահառուների, այդ թվում՝ *«Ձեռամբ հյուսած»* և *«Շուլալ*	

		Ժամկետ՝ 2022-2026թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	*կարպետի ուսուցում և հարահոչակում»* ծրագրերում ընդգրկված տարբեր տարիքի երեխաների և կանանց ուսուցանվել է հայկական ձեռարվեստի 4 ուղղություն՝ գորգագործություն, ասեղնագործություն, կարպետագործություն և թաղիքագործություն: - Ոչ նյութական մշակութային ժառանգության իրազեկման նպատակով ՀՀ Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի, Արագածոտնի մարզերի 4 համայնքներում *«Սննդի մշակույթ»* ծրագրի շրջանակում իրականացվող հետազոտական աշխատանքի արդյունքում ուսումնա-սիրվել է ուտեստի պատրաստման ավանդույթը, որի հիման վրա վավերագրական ֆիլմեր են նկարահանվել՝ ներկայացնելով սննդի մշակութային, պատմական և սոցիալական համատեքստը, ինչպես նաև պատրաստման ավանդական ձևերը: -Հունիսի 21-22-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում տեղի ունեցած *«Արհեստների միջազգային 4-րդ փառատոնին»* մասնակցել են ՀՀ 8 մարզերի 20 համայնքների շահառուներ, որոնք ներկայացրել են Հայաստանի և արտերկրի ոչ նյութական մշակութային ժառանգությունը: - *«Իմ ձեռագործ Հայաստան»* 3-րդ փառատոնին մասնակցել է 70 հայ և վրացի արհեստագործ վարպետ: Կարևորվել է կանանց և երիտասարդների մասնակցությունը ծրագրին: Իրականացվել է հայկական և վրացական ազգային հագուստների ցուցադրություն (https://www.youtube.com/watch?v=zTNsUSSXJPo):	
		33.6 Դպրոցականների համար բաժանորդային ծրագրի իրականացում Ժամկետ՝ 2023-2026 թթ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ծրագրի շրջանակում մշակութային հաստատություններ այցելած աշակերտների ընդհանուր թիվը կազմել է 310025, որից՝ թանգարաններ՝ 150403, թատրոններ՝ 152093, համերգասրահներ՝ 7529:	

34.	Մշակութային ժառանգության թվայնացում, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնում	34.1 Ոչ նյութական մշակութային ժառանգության շտեմարանի համալրում Ժամկետ՝ 2022-2026 թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	«ՀՀ Ոչ նյութական մշակութային ժառանգության» շտեմարան (www.int-heritage.am) յուրաքանչյուր ամիս մուտքագրվել են 3 եռալեզու հոդված, 10 նորություն, 2 հայտարարություն, 2 տեսանյութ: Շտեմարանում ավելացվել է 2 նոր դաշտ՝ «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ոչ նյութական մշակութային ժառանգություն» (https://int-heritage.am/intangible-cultural-heritage-of-forcibly-displaced-persons-from-nagorno-karabakh/) և «Արհեստների միջազգային փառատոն. Գավառ» (https://intheritage.am/international-crafts-festival-gavar/): Շտեմարանը համալրվել է 2 նոր ցանկով, մասնավորապես՝ «Խաղերի շտեմարան»-ի ցանկը, որը ընդգրկում է 471 խաղ (https://int-heritage.am/game-repository/) և «Ուտեստի շտեմարան»-ի ցանկը, որը համալրվել է միջին մասնագիտական կրթության և ուսուցման հաստատությունների ուտեստի ցանկով (https://int-heritage.am/utesti-shtemaran/) և ներկայում բաղկացած է 414 ուտեստից:	
		34.2 Գրադարաններում էլեկտրոնային սպասարկման ծրագրի ներդնում «ԿՈՀԱ» (Հայաստանյան գրադարան-ների էլեկտրոնային համա-հավաք գրացուցակ) ծրագրի շրջանակում Ժամկետ՝ 2022-2026թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Էլեկտրոնային սպասարկում իրականացվում է «Հայաստանի ազգային գրադարան», «Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան» և «Շիրակի մարզային գրադարան» ՊՈԱԿ-ների կողմից: Իրականացվել է 485342 էլեկտրոնային սպասարկում, որից՝ Հայաստանի ազգային գրադարանը՝ 457513, Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը՝ 15189, Շիրակի մարզային գրադարանը՝ 11290, Արմավիրի մարզային գրադարան՝ 1350:	
		34.3 Թանգարանային հավաքածուների թվայնացում Ժամկետ՝ 2022-2026թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Թվայնացվել և մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան է մուտքագրվել 32574 և հաստատվել 23370 մշակութային արժեքի վերաբերյալ տեղեկույթ:	
35.	Օտարերկրյա պետություններում հայկական գրավոր ժառանգության	35.1 Արտերկրում հիմնված հայկական կրթական և մշակութային կենտրոններում, համայնքային նշանակության,	12-րդ դարի մեծագույն գործիչ Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն յոթ Կաթողիկէ թղթոց» աշխատության գնման և Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ-Մատենադարան	

	պահպանություն և հանրահռչակում	ինչպես նաև անհատական գրադարաններում, պահպան-ված հայկական գրավոր ժառանգության Հայաստան տեղափոխման «Լքյալ գրադարաններ» ծրագիր Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	տեղափոխման համար ՀՀ կառավարության որոշմամբ պահուստային ֆոնդից հատկացվել է 93 մլն դրամ: Ավստրիական հին և հազվագյուտ գրքերի ու ձեռագրերի INLIBRIS Gilhofer Nfg մասնագիտացված ընկերությունն ամիսներ առաջ աճուրդի էր հանել աշխատությունը, որը բացառիկ աստվածաբանական և ձեռագրագիտական արժեք ունի՝ հայ մատենագրության մեջ սա Աստվածաշնչի կաթողիկէ կամ ընդհանրական թղթերի ինքնուրույն առաջին մեկնությունն է: «Ձեռագրի թերթերից մեկը տարիներ առաջ հայտնվել էր Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, ուստի ձեռագրի ամբողջացումը կարևոր էր և խորհրդանշական աշխարհասփյուռ մատյանների հավաքագրման առումով: Մատենադարանը նախաձեռնել է նաև քննական բնագրի կազմության աշխատանքները, և նշված մատյանը էապես կնպաստի գիտական հետազոտության լիարժեքությանը:	
		35.2 Արտասահմանյան գրադարանների համալրում հայագիտական գրականությամբ Ժամկետ՝ 2023-2026թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը «Գրականության հրատարակում» միջոցառմամբ դրամաշնորհներ է հատկացրել «Բաքվի հայկական ժառանգությունը» (անգլերեն), «Հայկական մանրանկարչություն» (անգլերեն), «Ավետիք Իսահակյան» (անգլերեն), «Հայկական կինո. նյութեր և փաստաթղթեր (1937-1957)» (հայերեն, ռուսերեն, անգլերեն), «Նոր մատերիա. Սերգեյ Ջավադյանի հայկական վերացականության հավաքածուն» (հայերեն, անգլերեն) պատկերագրքերի հրատարակմանը: «Գրականության հրատարակում» միջոցառման շրջանակում լույս տեսած գրականությունը՝ 3000 օրինակ, (նաև նախորդ տարիներին հրատարակվածները) բաշխվել է հանրապետական և արտասահմանյան գրադարաններին՝ ապահովելով գրքերի թիրախային և լայն տարածումը:	
36.	Ստեղծագործական կարողությունների լիարժեք արտահայտման և իրացման համար բարենպաստ միջավայրի ապահովում	36.1 «Ոչ պետական մամուլի հրատարակում» ծրագիր Ժամկետ՝ 2021-2026թթ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	«Ոչ պետական մամուլի հրատարակում» ծրագրի շրջանակում պայմանագիր է կնքվել 25 կազմակերպության հետ, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների համար Հայաստանում լույս տեսնող 9 տպագիր պարբերականի, գրական տպագիր և էլեկտրոնային 8 պարբերականի և մշակութային տպագիր և էլեկտրոնային 9 պարբերականի գործունեության համար:	

		36.2 «Աջակցություն գրակա-նության հանրահռչակմանը, գրական ծրագրերին և գրքերի միջազգային ցուցահանդես-ներին մասնակցությանը» ծրագիր Ժամկետ՝ 2022-2026թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	- 2025 թվականի մարտի 27-30-ը, Հայաստանը առանձին տաղավարով մասնակցել է *Լայպցիգի գրքի միջազգային ցուցահանդեսին*: Ցուցահանդեսին ներկայացվել է շուրջ 200 օտարալեզու հայ գրականություն, որից զգալի մասը փոխանցվել է Լայպցիգի հայ համայնքին՝ համալսարանի և ազգային գրադարանների ֆոնդերը համալրելու նպատակով: Միջոցառումների սրահներում անցկացվել է 5 միջոցառում, որոնցից 3-ը նվիրված են եղել Ավետիք Իսահակյանի 150-ամյա հոբելյանին: Ցուցահանդեսին մասնակցել են 2040 ցուցադրողներ 45 երկրից, 55000 ոլորտային մասնագետներ, 296000 այցելուներ, 3658 մեդիայի ներկայացուցիչներ, տեղի է ունեցել 2800 միջոցառում: -Հոկտեմբերի 15-19-ը Հայաստանն առանձին տաղավարով մասնակցել է *Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ցուցահանդեսին*: Ցուցահանդեսին մասնակցել են շուրջ 100 երկրից 4000 ցուցադրողներ, 90000-ից ավելի ոլորտային մասնագետներ, 85000-ից ավելի այցելուներ, 6000-ից ավելի լրագրողներ և մեդիայի ոլորտի ներկայացուցիչներ: Հայաստանի ազգային տաղավարում ներկայացել են շուրջ մեկ տասնյակ հայաստանյան հրատարակչություններ և գրական գործակալություններ, ներկայացվել է վերջին տարիների գրահրատարակչական արտադրանքը՝ 200 գիրք, ինչպես նաև «Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագիրը՝ նախատեսված արտասահմանյան հրատարակչությունների համար: - *Գրքի երևանյան միջազգային փառատոնը* տեղի է ունեցել սեպտեմբերի 5-7-ը Հայաստանի ազգային պատկերասրահում և Հայաստանի պատմության թանգարանում: Իրականացվել են 50-ից ավելի միջոցառումներ, գրքի ցուցահանդես-տոնավաճառին մասնակցել են շուրջ 50 կազմակերպություններ Հայաստանից և 10 երկրից միջոցառումներին մասնակցել են 200-ից ավելի գրողներ, թարգմանիչներ, քննադատներ, երեք օրերին վաճառվել է 18000 գիրք, փառատոնն ունեցել է 40 000-ից ավելի այցելու:	

			Հանրապետական գրական մրցույթին մասնակցել է 361 գրող, իսկ Սարոյանի անվան միջազգային մրցույթին՝ 108 գրող 25 երկրից: Փառատոնին մասնակցել են անվանի գրողներ, գործակալներ և հրատարակիչներ Միացյալ Թագավորությունից, Իտալիայից, Լատվիայից, Վրաստանից, Ռուսաստանից, Չեխիայից, Հունաստանից, Նիդերլանդներից, Իրանից, Միացյալ Նահանգներից: Այս տարի առաջին անգամ փառատոնն ունեցավ նաև մարզային երկու այց՝ Գյումրի և Կապան:	
		36.3 Մշակույթի տարբեր ոլորտներում ստեղծագործական ծրագրերի աջակցություն՝ դրամաշնորհների հատկացման բաց-մրցութային համակարգի միջոցով, ինչպես նաև դեբյուտային ստեղծագործական ծրագրերի և արվեստի փորձարարական և նորարարական ձևերի խրախուսում Ժամկետ՝ 2021-2026 թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Մշակույթի տարբեր ոլորտներում իրականացվել է 55 դրամաշնորհային ծրագիր, որից դրամաշնորհների հատկացման բաց-մրցութային համակարգի միջոցով 7 ոլորտի 10 անվանակարգում աջակցություն է ցուցաբերվել 41 նախագծի՝ այդ թվում 3 դեբյուտային ստեղծագործական և 5 նորարարական ծրագրերի:	
37.	Հայաստանում մշակութային զբոսաշրջության զարգացում և ժառանգության ոլորտի ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների ընդլայնում	37.3 «Երերույքի տաճար» պատմամշակութային արգելոց ստեղծելու, «Երերույքի տաճար» արգելոցի մասնաճյուղ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N 312-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում Ժամկետ՝ 2025թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ կառավարության 2024 թ. օգոստոսի 29-ին հաստատվել է «Երերույք», «Հին Խնձորեսկ», «Բերդկունք ամրոց» և «Նորատուսի խաչքարեր» ատմամշակութային արգելոցներ ստեղծելու, «Երերույք», «Հին խնձորեսկ», «Բերդկունք ամրոց» և «Նորատուսի խաչքարեր» պատմամշակութային արգելոց մասնաճյուղեր ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N 312-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 1383-Ն որոշումը:	

38.	Հայաստանի, սփյուռքի, Արցախի մշակութային ժառանգության պահպանման, անվտանգության, միջազգայնացման, պատմական, իրավական տեղեկացվածության համակարգված տարածման ռազմավարություն մշակող և իրականացնող կենտրոնի ստեղծում	38.1 «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության վերանայում, կառուցվածքային փոփոխություն, նոր հաստիքների համալրում, միջազգային կառույցների հետ կապի խթանում, ուղղակի դրամաշնորհների տրամադրում, հնագիտական գտածոների վերականգնման ոլորտի կադրերի վերապատրաստում արտասահմանյան մասնագետների ներգրավմամբ Ժամկետ՝ 2025թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	-«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կառուցվածքում տեղի է ունեցել փոփոխություն և հաստիքների համալրում: Ստեղծվել է Ղարաբաղի և Սփյուռքի հայկական հուշարձանների մշտադիտարկման խումբ՝ բաղկացած երեք հաստիքից՝ խմբի ղեկավար, առաջատար մասնագետ և ավագ մասնագետ: Մասնագիտական խումբը զբաղվել է Լեռնային Ղարաբաղի և սփյուռքի տարբեր գաղթօջախների (Ղրիմ, ՌԴ, Ռումինիա, Լեհաստան, Մոլդովա, Բուլղարիա և այլն) պատմության ուսումնասիրմամբ, մատենագրական և համացանցային աղբյուրներից համապատասխան նյութերի հավաքմամբ: Մասնագիտական գրականության հիման վրա ստեղծվել է Ղարաբաղի և Սփյուռքի հայկական հուշարձանների վերաբերյալ գիտական շտեմարան, հստակեցվել է Ղարաբաղի և Սփյուռքի հայկական հուշարձանների տեղակայման վայրերի կոորդինատները: Գիտահետազոտական կենտրոնում մշակվում է Ղարաբաղի հուշարձանների արխիվը: - Ֆրանսիայի Ժառանգության ազգային ինստիտուտի հետ համատեղ 2025 թ. ընթացքում իրականացրել է մի շարք գիտակրթական միջոցառումներ՝ նվիրված մշակութային ժառանգության (անշարժ և շարժական) կառավարմանը և պահպանությանը. 1. Մայիսի 16-21-ը անցկացվել է գիտագործնական հինգօրյա դասընթաց՝ նվիրված լուսանկարչական վավերագրերի կոնսերվացմանը և խնամքին: 2. Հոկտեմբերի 28-29-ը կազմակերպվել է «Մշակութային ժառանգության (անշարժ և շարժական) կառավարում և պահպանություն» խորագրով երկօրյա դասընթաց: 3. Հոկտեմբերի 21-27-ը և հոկտեմբերի 28-29-ը վերապատրաստման դասընթաց է իրականացվել «Հավաքածուների պահպանման պլան» խորագրով: - 29 տարվա ընդմիջումից հետո ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության նախնական ցանկում ընդգրկվել են Տիրինկատար հնավայրի վիշապաքարերը և մշակութային լանդշաֆտը, «Երևանի ուրարտական	

			ժառանգությունը» և «Գառնի հնագիտական համալիրը և Քարերի սիմֆոնիան» հայտերը: -ՊՈԱԿ-ը շարունակել է համագործակցել ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնի հետ (նախարարության պատվերով մշակել է և ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնին է ներկայացվել «Կապույտ մզկիթ» հայտը՝ նախնական ցանկում ընդգրկելու նպատակով), կազմակերպել է ICOMOS-ի և IUCN-ի մասնագետների ներգրավմամբ աշխատաժողով՝ նվիրված ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության նախնական ցանկում ընդգրկված և ընդգրկվելիք հուշարձաններին:	
39.	Մշակութային ժառանգության պահպանության ներառականության ապահովում, հասարակության խոցելի խմբերի համար մշակույթին հաղորդակից լինելու իրավունքի իրացում	39.1 «Ընտանեկան գրադարանավար» ծրագրի ընդլայնում Ժամկետ՝ 2023-2026թթ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	«Ընտանեկան գրադարանավար» ծրագրի շրջանակներում Խնկո ապոր անվան ազգային մանկական գրադարանի, ՀՀ 10 մարզային գրադարանների կողմից տեղաշարժման դժվարություն և հաշմանդամություն ունեցող անձանց համար տնային պայմաններում գրադարանային ծառայություններ է մատուցվել 836 շահառուների, տրամադրվել է 15703 միավոր գիրք:	
		39.2 Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ներառական ծրագրեր Ժամկետ՝ 2021-2026թթ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ	-*«ՍևանաՅԱՆՅ»* ծրագրին մասնակցեցին ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ, Մարտունի, Վարդենիս, Ճամբարակ և Սևան խոշորացված համայնքների 10 բնակավայրի 16 երիտասարդ, որոնք ներգրավվել են բազմաբնույթ մշակութային միջոցառումներում: Ծրագրի նպատակն էր ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներում երիտասարդության շրջանում ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության գաղափարի տարածումը, մշակութային և բնապահպանական կրթության խթանումը: -*«EthnoRhythm. Ազգային հնչյունների նոր զարկերակը»* երիտասարդական մշակութային ծրագիրը իրականացվել է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում: Ծրագիրն ուղղված է	

			հայկական ոչ նյութական մշակութային ժառանգության, մասնավորապես՝ վիճակի երգերի և ավետիսների ժամանակակից գործիքավորմամբ ներկայացման միջոցով ազգային երգարվեստի ճանաչելիության բարձրացմանը: -*«Տոները Ախալցխայում»* ծրագրի ընթացքում իրականացվել է Վրաստանի Ախալցխայի շրջանի 6 համայնքների ոչ նյութական մշակութային ժառանգության գույքագրում, որը կամփոփվի էլեկտրոնային գրքի հրատարակմամբ և որի միջոցով կապահովվի ոչ միայն լայն հասարակության, այլև երիտասարդության շրջանում ոչ նյութական մշակութային ժառանգության իրազեկման, ճանաչելիության բարձրացման ու կենսունակության խթանումը: -*«Իմ ձեռագործ Հայաստան»* 3-րդ փառատոնին մասնակցել են 70 հայ և վրացի արհեստագործ վարպետ: Կարևորվել է կանանց և երիտասարդների մասնակցությունը: Տեղի է ունեցել հայկական և վրացական ազգային հագուստների ցուցադրություն (https://www.youtube.com/watch?v=zTNsUSSXJPo): -*«Ձեռամբ հյուսած»* ծրագրի արդյունքում ՀՀ Լոռու մարզի Ալավերդի, Օձուն, Ախթալա համայնքների տարբեր տարիքի 100 երեխաներ և կանայք սովորել են հայկական ձեռարվեստի 5 տեխնիկաներ՝ գորգագործություն, միակողմանի և երկկողմանի կարպետագործություն, Մարաշի ասեղնագործություն և թաղիքագործություն: Դասընթացն ամփոփվեց ցուցահանդեսով՝ 70 լավագույն աշխատանքների ցուցադրությամբ (https://escs.am/am/news/31723): -*«Շուլալ կարպետի ուսուցում և հանրահռչակում»* ծրագրի արդյունքում Իջևան, Աչաջուր, Գանձաքար և Խաշթառակ համայնքների տարբեր տարիքի 60 կանայք մասնակցել են շուլալ տեխնիկայով գործվող կարպետների ուսուցմանը: Ծրագրի ավարտին կազմակերպվել է 1 ամփոփիչ ցուցադրություն, իսկ ծրագրի մասին պատմող հոլովակը հասանելի է հետևյալ հղումով. TELIK 3.mp4 - Google Drive	

		39.3 Հասարակության խոցելի խմբերի համար նպատակային միջոցառումների կազմակերպում Ժամկետ՝ 2021-2026թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	✓ «Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ը խոցելի խմբերի համար իրականացրել է 3 շրջայց, որոնց մասնակցել են 25 անձ, կազմակերպվել է մեկ կրթական ծրագիր, որի մասնակիցների թվում եղել են հաշմանդամություն ունեցող 9 անձ: ✓ «Ռուսական արվեստի թանգարան» (պրոֆ. Ա. Աբրահամյանի հավաքածու) ՊՈԱԿ-ը հաշմանդամություն ունեցող անձանց համար իրականացրել է հետևյալ ծրագրերը. - Մարտ ամսին՝ Մայրության տոնին նվիրված «Ծաղկային հեքիաթ» խորագրով կրթական ծրագիր: Մասնակցել են լսողության և խոսքի խանգարում ունեցող շուրջ 15 դպրոցական՝ 10-13 տարեկան: - Դեկտեմբերի 5-ին թանգարանում մեկնարկել է «Արվեստ Արվեստի Համար» խորագրով ներառական ծրագիր՝ տեսողական խանգարում ունեցող այցելուների համար: Ծրագրի 25 մասնակիցները Կույրերի մշակույթի տան անդամներ էին: Ծրագիրը կրելու է շարունակական բնույթ: ✓ «Ս.Փարաջանովի թանգարան» ՊՈԱԿ-ն իրականացրել է իրականացրել է երկու ծրագիր խոցելի խմբերի՝ աուտիզմ ունեցող անձանց համար: Մասնակիցների քանակը՝ 45 հոգի: ✓ «Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան» ՊՈԱԿ-ում սահմանափակ կարողությամբ երեխաների համար իրականացվել է 7 անվճար կրթական ծրագիր՝ 2-ական՝ «Հայկական հանգույց», «Հայկական տարազ», «Ստվերների թատրոն», 1 «Սարդարապատի փառահեղ ճակատամարտը» խորագրերով, որոնց մասնակցել են 90 սահմանափակ հնարավորություններով երեխաներ: ✓ «Երվանդ Քոչարի թանգարան» ՊՈԱԿ-ում իրականացվել է ընդունելություն «Էխո» իրավապաշտպան կազմակերպության հաշմանդամություն ունեցող 20 պատանիների համար: ✓ «Խ. Աբովյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ն իրականացրել է 2 կրթական ծրագիր, որոնց մասնակցել է 20 հաշմանդամություն ունեցող երեխա:	

			✓ «Ավ. Իսահակյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ն իրականացրել է խոցելի խմբերի համար 13 ծրագիր, մասնակիցների թիվը՝ 287: ✓ «Ե. Չարենցի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ն իրականացրել է 1 միջոցառում, որին մասնակցել է 7 հաշմանդամություն ունեցող երեխա: ✓ «Պատմամշակութային արգելոց թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ն իրականացրել է 29 ծրագիր, որոնց մասնակցել է 315 սահմանափակ կարողություններով երեխա: ✓ «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ն իրականցրել է թիրախային 4 ծրագիր, մասնակիցների թիվը՝ 599: ✓ «Արամ Խաչատրյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ը խոցելի խմբերի համար իրականացրել է 3 կրթական ծրագիր, որոնց մասնակցել է 69 շահառու: ✓ «Օրբելի եղբայրների տուն-թանգարան» ՊՈԱԿ-ն իրականացրել է 2 ծրագիր, մասնակիցների թիվը՝ 48: «Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ն իրականացրել է 4 ծրագիր, մասնակիցների թիվը՝ 30:	
41.	Ինքնազբաղ/ անկախ ստեղծագործողների հանրային ինստիտու-տիցիոնալացում	41.2 Կինոնկարների արտադրություն Ժամկետ՝ 2022-2026թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	«Կինեմատոգրաֆիայի ծրագրի», «Կինոնկարների արտադրություն» միջոցառման շրջանակում աջակցություն է տրամադրվել 22 կինոնախագծի՝ զարգացման, արտադրության փուլերի, որից 10-ը իրականացվում են համատեղ արտադրությամբ, այդ թվում՝ 8 խաղարկային /որից 1-ը կարճամետրաժ/, 6 վավերագրական /որից 2-ը կարճամետրաժ/, 8 անիմացիոն /որից 1-ը լիամետրաժ՝ զարգացման փուլի/: Ապահովվել է մասնակցություն 3 կինոշուկայի՝ Բեռլինի /European film market/, Կաննի /Marché du Film/ և Անսիի /Mifa/: Հայկական արտադրության ֆիլմերը ներկայացվել են Բեռլինի, Կաննի, Անսիի, Լոկառնոյի, Սարաևոյի, Ամստերդամի, Միացյալ Թագավորության, Հնդկաստանի, Բուխարեստի և այլ միջազգային կինոփառատոներում, Վատիկանի առաքելական գրադարանի Սիքստինյան սրահում, Բանգկոկի կինոմրցանակաբաշխությանը: Աջակցություն է տրամադրվել 3 միջազգային կինոփառատոների իրականացմանը՝ «Ոսկե ծիրան»	

			միջազգային 22-րդ կինոփառատոն, 17-րդ «ՌԵԱ» փառատոն, Երևանի կարճամետրաժ ֆիլմերի 8-րդ միջազգային կինոփառատոն: «Կինեմատոգրաֆիայի ծրագրի», «Կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանման ծառայություններ» միջոցառման շրջանակում թվայնացվել և վերականգնվել է կինոժառանգության 13 ֆիլմ (այդ թվում՝ 8 թվայնացում և վերականգնում, 5 վերականգնում) և 150 լուսանկար:	
42.	Մշակույթի մեկենասության ինստիտուտի ներդրում և կայացում և պետություն-մասնավոր համագործակցության ընդլայնմանն ուղղված փոխշահավետ մեխանիզմների խթանում	42.1 Մշակույթի մեկենասի հանրային վարկանիշի ձևավորում, մեկենասության պետական խրախուսում տեղեկատվական դաշտում Ժամկետ՝ 2022-2023թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ 2024-2025 թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	«Օրենսդրական փոփոխությունների փաթեթը սահմանված կարգով փոխանցվել է ՀՀ փոխվարչապետի գրասենյակ՝ հետագա ընթացքը ապահովելու համար: Նախագծի մշակման աշխատանքներն իրականացվել են ԵՄ Արտնեքսուս և Կատապուլտ ծրագրերի համակարգող թիմերի և ՀԲԸՄ հետ համատեղ: «Կատապուլտ» ծրագրի ավարտից հետո պետություն-մասնավոր համագործակցության ներքո ձևավորվել է «ԱՍԱ Արվեստի ջատագովման համայնք»-ը (ASA Advocacy Society for the Arts), որի հետ համատեղ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը իրականացնում է ստեղծարար ոլորտի ներկայացուցիչների համար նախատեսված դասընթացներ և վերապատրաստումներ՝ ուղղված արվեստագետների ֆինանսական գրագիտության ամրապնդմանը, ինչպես նաև նրանց եկամուտների հայտարարագրման համար անհրաժեշտ տեղեկությունների և խորհրդատվության տրամադրմանը: Ծրագրի շրջանակում նոյեմբերի 15-ին Հայաստանի պետական ֆիլհարմոնիայում տեղի է ունեցել «Վերծանելով ստեղծարար արդյունաբերությունը» խորագիրը կրող ASA ֆորումը և մրցանակաբաշխությունը:	
		42.2 Բարերարների հետ համագործակցություն, պետական միջոցներով կազմված վերականգնման նախագծերի անվճար տրամադրում, մասնագիտական խորհրդատվություն, հուշագրերի ստորագրում, մեկենասության տարեգրքի համար տեղեկատվության տրամադրում	Արվեստի ոլորտում համագործակցություն է իրականացվել 4 բարեգործական կազմակերպությունների հետ՝ Ֆաստեքս, Կերոն հիմնադրամ /ստորագրվել են համագործակցության հուշագրեր/, Դար հիմնադրամ, ԱՍԱ հիմնադրամ: Արդյան և Թումո կազմակերպությունների հետ իրականացվել են համատեղ մշակութային լայնածավալ ծրագրեր: «Պրոայթիլաբ» ՍՊԸ-ի հետ համատեղ մշակվել և ստորագրվել է Հուշագիր՝ տոմսերի վաճառքի միասնական հարթակ ստեղծելու համար, որը կգործարկվի 2026թ-ից:	

		Ժամկետ՝ 2022–2026թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Հուշարձանների վերականգնման ուղղությամբ բարերարների հետ կնքվել են 3 հուշագրեր՝ «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի հետ՝ Սյունիքի մարզի Կուրիս գյուղի Սբ Ամենափրկիչ եկեղեցու Ագարակ քաղաք տեղափոխելու և վերականգնելու նպատակով, բարերար Արման Մայիլյանի (Տավուշի մարզի Չինչին գյուղի Կապտավանք եկեղեցի) և «Հայաստանի էնոտուրիզմի խորհուրդ» ՀԿ-ի ու «Արենի-1 քարայր» գիտահետազոտական հիմնադրամի («Արենի-1 քարարյրը և հարակից գինեգործական լանդշաֆտը» հայտի մշակման և ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության նախնական ցանկում ընդգրկում) հետ:	
43.	Թատերահամերգային կազմակերպություններում նյութատեխնիկական բազայի արդիացում	43.1 Մշակութային հաստատությունների գույքի և նյութատեխնիկական բազայի բարելավում	Կապիտալ հատկացումներ են տրամադրվել 12 թատերահամերգային կազմակերպությունների՝ -Գորիսի Վ. Վաղարշյանի անվան դրամատիկական թատրոնի և Վանաձորի Հովի. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնների շենքերի նախագծանախահաշվային աշխատանքների, -Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի շենքի շինարարական աշխատանքների, և երաժշտական գործիքների ձեռք բերման, - Արամ Խաչատրյան համեգասրահի շինարարական աշխատանքների և վերելակի ձեռքբերման, -Կամերային երաժշտության ազգային կենտրոնի երաժշտական գործիքների ձեռքբերման, - Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախմբի փորձասենյակի հատակի նորոգման, - Կ. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոնի աթոռների ձեռքբերման, - Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական, Սոս Սարգսյանի անվան համազգային, Երևանի կամերային պետական, Արտաշատի Ա. Խարազյանի անվան պետական դրամատիկական, Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնների լուսաձայնային սարքավորումների, դահլիճների ու բեմերի հարդարման համար:	

45	Մշակութային-կրթական նպատակային ծրագրերի իրականացում	45.1 «Դասարան +Դասական» ստեղծագործական կրթական ծրագրի իրականացում Ժամկետ՝ 2021-2026թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Մարտի 18-ից ապրիլի 5-ը ՀՀ ԿԳՄՍ նախարարության և Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի նախաձեռնությամբ իրականացվել է «Դասարան + Դասական» թատերական կրթական ծրագիրը: 250 հայտերից ընտրվել են 70 պատանիներ՝ Երևանից և ՀՀ մարզերից: Մասնակիցները աշխատել են 5 խմբերով՝ երեքը դրամատիկ, մեկը մնջախաղ, մեկը՝ մյուզիքլ: Ծրագիրն ավարտվել է ապրիլի 5-ին՝ հաշվետու ներկայացմամբ: Բոլոր մասնակիցներին տրվել է մեկ տարվա Մայր թատրոնի ներկայացումներին ազատ մուտք գործելու հնարավորություն: Մանրամասները՝ ծրագրի ֆեյսբուքյան էջում facebook.com/dasaran.dasakan:	
		45.2 Ներառական փառատոնների կազմակերպում, մշակույթի ոլորտի մասնագետների, արվեստագետների հետ համատեղ միջոցառումների իրականացում Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	«Գեղագիտության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն և «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ը համատեղ իրականացրել են ներառական գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության ծրագրեր շուրջ 700 երեխաների համար՝ այդ թվում հաշմանդամ: Աջակցություն է տրամադրվել 4 ներառական միջոցառման, այդ թվում՝ *«Ֆրեսկո»* արդի արվեստի և հոգևոր ֆիլմերի միջազգային ներառական փառատոնին, *«Hope for Dream»* ծրագրին, *«Ճախրուկ»* ամենամյա միջազգային ներառական փառատոնին, *«Կողք կողքի»* միջազգային ներառական երաժշտական արտ փառատոնին, ինչպես նաև «Երաժշտական և արվեստի դպրոցներում ներառականության ապահովմանն ուղղված դասընթացներին»: Ծրագիրն իրականացվել է Երևանում և ՀՀ 7 մարզերում՝ Արարատի, Գեղարքունիքի, Տավուշի, Կոտայքի, Արմավիրի, Շիրակի և Արագածոտնի մարզերում՝ ապահովելով լայն աշխարհագրություն: Ընդհանուր առմամբ, դասընթացներին մասնակցել է 83 ուսումնական հաստատության 308 մանկավարժ: Վերանայման փուլում է «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը: «Գեղագիտության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն»	

			ՊՈԱԿ-ի ներառական գործունեությունը իրականացվել է համադրված և փոխհամաձայնեցված ձևաչափով: Կազմակերպվել են համատեղ ծրագրային հանդիպումներ, որոնց ընթացքում մշակվել են միասնական մոտեցումներ աշխատանքային մեթոդների, ներառական միջոցառումների կազմակերպման և մասնակիցների ընտրության գործընթացների վերաբերյալ:	
		45.3 Երևանի և մարզերի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների փոխգործակցության «Քույր դպրոցներ» կրթական նպատակային ծրագրի իրականացում Ժամկետ՝ 2022-2026 թթ դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ծրագրում ներառված են հանրապետության 60 երաժշտական և արվեստի դպրոցներ, իսկ ծրագրի միջոցառումներին մասնակցություն են ցուցաբերել շուրջ 600 աշակերտներ և մանկավարժներ: Կազմակերպվել է 20 միջոցառում և իրականացվել ավելի քան 60 վարպետության դասեր: Միջոցառումների մասնակիցների համար, բացի համերգային ծրագրերից, վարպետության դասերից, համատեղ ստեղծագործական ծրագրերի իրականացումից, կազմակերպվել են նաև հայրենաճանաչության բաղադրիչ ունեցող 20 այցելություններ Երևանի և ՀՀ մարզերի պատմամշակութային և տեսարժան վայրեր: «Քույր դպրոցներ» ծրագիրն ընդլայնել է իր գործունեության շրջանակը և առաջին անգամ իրականացվել է նաև արտերկրում: Ծրագրի շրջանակում 10 աշակերտ և 1 նվագակցող, որոնք ներկայացրել են Երևանի, Գյումրիի, Աշտարակի և Կապանի երաժշտական և արվեստի դպրոցները, համերգային ծրագրերով հանդես են եկել Ֆրանսիայի Լիոն և Վալանս քաղաքներում:	
		45.4 «Քո արվեստը դպրոցում» ծրագիր Ժամկետ՝ 2021-2026թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Ծրագրի շրջանակներում իրականացվել է 42 հանդիպում՝ ՀՀ բոլոր մարզերում և Երևանում: Հանդիպումներին ներգրավվել են 399 դպրոցի 4258 աշակերտ և 454 ուղեկցող մանկավարժ: Ծրագրի արդյունքում նկարահանվել է 42 հեռուստահաղորդում: Հանդիպումները կազմակերպվել են 42 արվեստագետի մասնակցությամբ՝ ինտերակտիվ ձևաչափով, նպատակ ունենալով նպաստել աշակերտների գեղագիտական դաստիարակությանը և մշակութային տեղեկացվածության բարձրացմանը:	
		45.5 «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի իրականացում	«Մեկնարկ» ծրագրի շրջանակում 15 տաղանդավոր երիտասարդ երաժիշտ-կատարողներ մասնակցել են շուրջ 61 միջոցառումների, այդ թվում՝ վարպետության դասերի, համերգների, փառատոների և մրցույթների: Ծրագրին	

		Ժամկետ՝ 2021-2026թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	ներգրավված են նաև 6 առաջատար երաժիշտ-մասնագետներ, որոնք ապահովել են ավագ սերնդի փորձի փոխանցմանը՝ նպաստելով երիտասարդ տաղանդների կայացմանը:	
		45.6 «Երաժշտական և արվեստի դպրոցների համար ուսումնամեթոդական գրականության մշակում և հրատարակում» ծրագրի իրականացում Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	«Երաժշտական և արվեստի դպրոցների համար ուսումնամեթոդական գրականության մշակում և հրատարակում» ծրագրի շրջանակում մշակվել և հրատարակվել է 12 առարկայական ծրագիր՝ «Տուբա», «Գալարափող», «Տրոմբոն», «Կլարնետ», «Հոբոյ», «Սաքսոֆոն», «Ֆլեյտա», «Շեփոր», «Ֆագոտ» և «Արվեստի պատմություն. Պարարվեստ»: Առարկայական ծրագրերը հաստատվել և երաշխավորվել են գործածության ՀՀ ԿԳՄՍ նախարարի համապատասխան հրամաններով:	
47.	Մարզական բարձր արդյունքներին ուղղված բարեփոխումներ	47.3 «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում Ժամկետ՝ 2025 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ	Ընդունվել է «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 22.01.2025 թվականի N ՀՕ-14-Ն օրենքը, իրավակարգավորման է ենթարկվել ֆիթնեսի ոլորտը: Ընդունվել է 2025 թվականի մայիսի 29-ի «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-123-Ն օրենքը, որով ավելացվել են Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունները, մասնավորապես՝ մանկապատանեկան մարզական կազմակերպությունների անվանակոչության և անվանափոխության կարգը և չափորոշիչները սահմանելը:	
		47.4 Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում գործունեություն ծավալող ֆեդերացիաների, մարզական ակումբների և մարզական հասարակական այլ կազմակերպությունների գործունեության մշտադիտարկման և գնահատման չափանիշների մշակման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման ընդունում	ԿԳՄՍ նախարարության կողմից շրջանառվում է «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը՝ համաձայն որի Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի լիազոր մարմինը սահմանում է սպորտի կառավարման տեղեկատվական համակարգի վարման կարգը, մշակում, ներդնում և վարում է սպորտի ոլորտի պետական վարչական ռեգիստրները: Տեղեկատվական համակարգում կարտացոլվեն մարզական զանգվածային միջոցառումներին վերաբերող տվյալներ, այդ թվում՝ միջոցառման անվանումը, համայնքային, մարզային, եզրափակիչ փուլերի մասնակիցների թիվը, տղա/աղջիկ	

		Ժամկետ՝ 2025 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	մասնակիցների համամասնությունը, հաղթողները, մրցանակակիրները և այլն: Մարզական բարձր նվաճումներին, այդ թվում հաշմանդամային սպորտին վերաբերող վիճակագրական տվյալները կներառեն տարբեր մարզաձևերում ՀՀ առաջնություններում, միջազգային մրցաշարերում ցուցաբերած մարզական բարձր արդյունքները և այլ տվյալներ: Մանկապատանեկան սպորտի ոլորտին վերաբերող տվյալները կներառեն մարզադպրոցների վարչական հավաստի տվյալները, այդ թվում՝ մարզադպրոցի կոնտակտային տվյալները, գործող մարզաձևերը, խմբերի, պարապողների, մարզիչ-մանկավարժների թիվը և այլ տեղեկություններ, սպորտով զբաղվելու ցանկություն ունեցողներին ճիշտ կուղղորդելն սիրած մարզաձևով զբաղվելու հարցում: Կիրականացվի համակարգային և շարունակական մշտադիտարկում: Օրինագիծը Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունվել է:	
49	Մանկապատանեկան սպորտի զարգացում	49.1 «Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական կազմակերպություններ գույքով ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում Ժամկետ՝ 2022-2026թթ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ	«Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական կազմակերպություններ գույքով ապահովելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը ՀՀ ԿԳՄՍ նախարարության դեկտեմբերի 17-ի թիվ 01/31.3/42353-25 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն: Մարզական կազմակերպությունների նյութատեխնիկական բազան հագեցնելու նպատակով ժամանակակից մարզագույք և մարզասարքեր են տրամադրվել 10 մարզական կազմակերպության:	Նախագիծը շրջանառությունից հանվել է (ՀՀ Վարչապետի N 02/16-32/42527-25 հանձնարարական): Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 17-ի N 2060-Ն որոշման 1-ին կետի 14-րդ ենթակետի համաձայն 2025 թվականի ընթացքում կրթական, սպորտային, մշակութային և գիտական կազմակերպությունների համար պետական մարմինների կողմից

				ձեռք բերված գույքն այդ կազմակերպություններին սեփականության իրավունքով տրամադրվում է տվյալ պետական մարմնի որոշմամբ, այդ իսկ պատճառով կշրջանառվի ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրաման:
		49.3 Մարզական նշանակության կառույցների կառուցում և վերանորոգում Ժամկետ՝ 2025թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	*Շարունակվել են.* - Ա. Ալեքսանյանի անվ. հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզահամալիրի (ավարտը՝ 2026 թ.), - Հեծանվային սպորտի մարզադպրոցի (ավարտը՝ 2026 թ.), - Հ. Շահինյանի անվան մարզադպրոցի (ավարտը՝ 2026 թ.), - Երևանի օլիմպիական հերթափոխի մարզական քոլեջի ըմբշամարտի մարզադահլիճի (ավարտը՝ 2026-2027 թթ.), - Երևանում, Արտաշատում, Իջևանում և Մարտունիում ֆուտբոլային 4 դպրոցների կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները: - Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի մարզադպրոցի նոր շենքերի կառուցման աշխատանքները: *Մեկնակել է.* - Ա. Աբրահամի անվ. մարզադպրոցի, -Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոցի նոր մարզաբազայի, - Արմավիր համայնքի Մյասնիկյան բնակավայրի մարզադպրոցի կառուցման աշխատանքները: *Նախապատրաստվում են.* - Վ. Դարչինյանի, Ռոման և Մալխաս Ամոյանների, Ստեփան Սարգսյանի, Յուրի Սարգսյանի անվան մարզադպրոցների նախագծման աշխատանքները:	

			- Եղեգնաձորում, Մարտունիում և Արարատում տիպային մարզահամալիրների (մասնավոր ոլորտի գործընկերների հետ կնքվել է հուշագիր) նախագծման աշխատանքները, -Շենգավիթ վարչական շրջանում՝ բասկետբոլի ֆեդերացիայի հետ համատեղ՝ բասկետբոլի ակադեմիայի հիմնման աշխատանքները:	
50	Բնակչության տարբեր տարիքային խմբերի համար զանգվածային սպորտի տարածմանը և առողջ ապրելակերպի քարոզմանն ուղղված ծրագրերի իրականաց-ման անընդհատության ապահովում	50.1 «Հայաստանի Հանրապե-տության Վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարի անցկացում Ժամկետ՝ 2021-2023թթ. մայիսի 3-րդ տասնօրյակ 2024-2026թթ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Մրցաշարն անցկացվել է 3 փուլով՝ 1-ին փուլ՝ ՀՀ համայնքներում և Երևան քաղաքի վարչական շրջաններում՝ մայիսի 1-15-ը, տարածությունը՝ 25 կմ: 2-րդ փուլ՝ ՀՀ մարզերում և Երևան քաղաքում՝ մայիսի 15-30-ը, տարածությունը՝ 30 կմ: 3-րդ եզրափակիչ փուլ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի (Սևանա լճի թերակղզի–Շողակաթ բնակավայր 40 կմ ճանապարհահատվածում) 2025 թվականի սեպտեմբերի 12-13-ը, տարածությունը՝ 40 կմ: Մրցաշարն անցկացվել է 2 տարիքային խմբերով՝ մասնակցել են ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 7-9-րդ և 10-12-րդ դասարանների աշակերտներից կազմված հավաքական թիմերը. Մրցաշարի նախնական փուլերին մասնակցել է 940 դպրոցի 4214 աշակերտ: Սեպտեմբերի 13-ին՝ մրցարշավի եզրափակիչ փուլի մրցանակային տեղեր գրաված դպրոցների թիմերը, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչները և մասնակիցները պարգևատրվել են ԿԳՄՍ նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, մեդալներով և դրամական պարգևներով:	
		50.2 «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի անցկացում Ժամկետ՝ 2021-2023թթ. մարտի 3-րդ տասնօրյակ	«Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարը անցկացվել է 3 փուլով, երկու տարիքային խմբերով՝ 1-ին տարիքային խումբ՝ միևնույն դպրոցի 5-9-րդ դասարանի աշակետներից կազմված թիմ, 2-րդ տարիքային խումբ՝ միևնույն դպրոցի 10-12-րդ դասարանի աշակետներից կազմված թիմ: Միջոցառմանն ընդհանուր առմամբ մասնակցել է 574 դպրոցից 3236 աշակերտ:	

		2024թ. մայիսի 3-րդ տասնօրյակ 2025-2026 թթ. ապրիլի 3-րդ տասնօրյակ		
		50.3 «Հայաստանի Հանրապե-տության Վարչապետի գավաթ» սիրողական լողի մրցաշարի անցկացում Ժամկետ՝ 2022-2023 թթ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ 2024թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ 2025-2026 թթ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ	«Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական լողի մրցաշարի՝ 2025 թ. նախատեսված ձևաչափը, հաստատված կանոնակարգը և ժամկետները ՀՀ վարչապետի հանձնարարությամբ փոփոխվել են: Հիմք ընդունելով ՀՀ Վարչապետի բանավոր հանձնարարականը՝ որոշում է կայացվել անցկացնել նոր՝ «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» դպրոցականների լողի մրցաշարը: ՀՀ ԿԳՄՍ նախարարի 18.08.2025թ. N 1932-Ա/2 հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» դպրոցականների լողի մրցաշարի կանոնակարգը՝ ըստ որի, մրցաշարի Երևանի վարչական շրջանների, Երևանի քաղաքային և ՀՀ մարզերի մարզային փուլերը անցկացվել են հոկտեմբերի 15-ից նոյեմբերի 10-ը ներառյալ, իսկ եզրափակիչ փուլն անցկացվել է ՀՀ Կոտայքի մարզի ք. Ծաղկաձորում՝ նոյեմբերի 22-23-ը: Մրցաշարն անցկացվել է 2 տարիքային խմբով. 1-ին՝ 3-6-րդ դասարանի աշակերտներ, 2-րդը՝ 7-12-րդ դասարանի աշակերտներ: Մրցաշարի մարզային, Երևան քաղաքի վարչական շրջանների և քաղաքային փուլերում փոքր տարիքային խմբի մասնակիցները մրցել են 50 մետր, իսկ մեծերը՝ 100 մետր ազատ լողաոճով: Եզրափակիչ փուլում փոքր և մեծ տարիքի մասնակիցները մրցել են համապատասխանաբար 8x50 մետր և 8x100 մետր փոխանցումալողով, ազատ ոճով՝ խառը կազմով (4 աղջիկ և 4 տղա): Ընդհանուր առմամբ մրցաշարին մասնակցել է 1040 դպրոցական: Եզրափակիչ փուլում՝ յուրաքանչյուր տարիքային խմբում մրցանակային տեղեր գրված թիմերը, հավաքական թիմերի պատասխանատուները (մարզիչ կամ	

			ֆիզկուլտուրայի ուսուցիչ)՝ պարգևատրվել են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, հուշանվերներով, մեդալներով և դրամական պարգևներով:	
		50.4 «Հայաստանի Հանրապե-տության Վարչապետի գավաթ» խճուղավազքի մրցաշարի անցկացում Ժամկետ՝ 2021-2023թթ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ 2024-2026թթ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ	«Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» խճուղավազքի մրցաշարի՝ 2025 թվականին նախատեսված ձևաչափը և հաստատված կանոնակարգը և ժամկետները Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ փոփոխվել են: Հիմք ընդունելով ՀՀ Վարչապետի բանավոր հանձնարարականը՝ որոշում է կայացվել անցկացնել նոր ծրագիր՝ «Դպրոցականների վոլեյբոլի լիգա» մարզական խաղեր: ՀՀ ԿԳՄՍ նախարարի 15.08.2025թ. N 1922-Ա/2 հրամանով հաստատվել է «Դպրոցականների վոլեյբոլի լիգա» մարզական խաղերի կանոնակարգը, ըստ որի, մրցաշարը անցկացվել է 2025 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Մրցաշարի համայնքային և Երևան քաղաքի վարչական շրջանների փուլը անցկացվել է նոյեմբերի 1-20-ը: Վոլեյբոլի լիգան անցկացվել է 3 փուլով՝ համայնքային, մարզային և եզրափակիչ, երկու տարքային խմբերի դպրոցականների միջև՝ 6-7-րդ դասարաններ (2013-2014 թվականներին ծնված աշակերտներ) և 8-9-րդ դասարաններ (2011-2012 թվականներին ծնված աշակերտներ): Մրցաշարի համայնքային փուլին, ընդհանուր առմամբ, մասնակցել է 443 դպրոցի 5067 աշակերտ: Դեկտեմբերի 22-25-ը կայացել է մրցաշարի եզրափակիչ փուլը: Վոլեյբոլի լիգայի մրցանակային տեղեր գրված յուրաքանչյուր տարիքային խմբի թիմի 9 անդամները և ֆիզկուլտուրայի ուսուցիչը պարգևատրվել են ՀՀ ԿԳՄՍՆ համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, մեդալներով և դրամական պարգևներով՝ դպրոցի մարզական ենթակառուցվածքների բարելավման կամ մարզական գույք ձեռք բերելու նպատակով: Յուրաքանչյուր տարիքային խմբում 1-ին տեղ գրված դպրոցը պարգևատրվել է 4 մլն դրամով, 2-րդ տեղը՝ 2,5 մլն դրամով և 3-րդ տեղը՝ 1,5 մլն դրամով: Պարգևատրվել են նաև դպրոցի ուսուցիչները՝ 1-ին տեղ՝ 700 հազար դրամ, 2-	

			րդ տեղ՝ 500 հազար դրամ և 3-րդ տեղ՝ 300 հազար դրամ: Մրցաշարի հաղթող թիմերի աշակերտները յուրաքանչյուր տարիքային խմբում պարգևատրվել են դրամական մրցանակներով. 1-ին տեղ՝ 9 աշակերտ՝ 150-հազարական դրամ, 2-րդ տեղ՝ 9 աշակերտ՝ 100-հազարական դրամ, 3-րդ տեղ՝ 9 աշակերտ՝ 75-հազարական դրամ: Եզրափակիչ փուլում 1-ին տեղը զբաղեցրել է Երևանի թիվ 177 հիմնական դպրոցը, 2-րդ տեղը՝ Արարատի մարզի Նորաշենի միջնակարգ դպրոցը, 3-րդ տեղը՝ Գեղարքունիքի մարզի Լուսակունքի միջնակարգ դպրոցը, 2-րդ տարիքային խմբում 1-ին տեղը զբաղեցրել է Երևանի թիվ 177 հիմնական դպրոցը, 2-րդ տեղը՝ Արարատի մարզի Նորաշենի միջնակարգ դպրոցը, 3-րդ տեղը՝ Արմավիրի մարզի Արազափի միջնակարգ դպրոցը:	
		50.5 Մասսայական սպորտին առնչվող ծառայությունների իրականացում Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	*Իրականացվել է.* -«Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառումը՝ 4 փուլով /փետրվար-մայիս ամիսներին/: Սպորտլանդիային մասնակցել է 9460 մասնակից 604 դպրոցից: - ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադան անցկացվել է 4 փուլով՝ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարաններում սովորող աշակերտների մասնակցությամբ՝ 8 մարզաձևերից՝ շախմատ, հրաձգություն, հնգամարտ, բազկամարտ, սեղանի թենիս, բասկետբոլ, վոլեյբոլ, ֆուտզալ: Սպարտակիադային ընդհանուր առմամբ մասնակցել է շուրջ 23359 աշակերտ: Սպարտակիադայում բոլոր 8 մարզաձևերում ՀՀ մարզերի և Երևան քաղաքի թիմերի ընդհանուր թիմային հաշվարկով մրցանակային տեղեր գրաված մարզերը Նախարարության կողմից պարգևատրվել են հավաստագրերով գավաթներով և մարզագույքով: - Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերը նախատեսված էր անցկացնել 2025 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Ացկացվել են նախազորակոչային և զորակոչային տարիքի	

			երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի միայն առաջին համայնքային փուլի մրցումները: Խաղերի համայնքային փուլին մասնակցել է 522 հանրակրթական դպրոցների շուրջ 4968 աշակերտ: *Խաղերը ՀՀ ԿԳՄՍ նախարարության և «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ կազմակերպության միջև կնքված՝ N ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-25/7-1 Պետության կարիքների համար ծառայության մատուցման պետական գնման պայմանագրի լուծման պատճառով դադարեցվել են:*	
		50.6 «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» Դպրոցականների թիմային խճուղավազքի անցկացում Ժամկետ՝ 2023 թթ. մայիսի 3-րդ տասնօրյակ 2024-2026 թթ. հունիսի 3-րդ տասնօրյակ	«Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքը անցկացվել է մայիս և հունիս ամիսներին երկու փուլով: 1-ին փուլ մայիսին՝ ՀՀ մարզերում, Երևան քաղաքում, 2-րդ եզրափակիչ փուլ՝ հունիսի 28-29-ը՝ ՀՀ Տավուշի մարզի Պարզ լճի ճանապարհի 5 կմ հատվածում: Միջոցառմանը ընդհանուր առմամբ մասնակցել են, 381 դպրոցից 2667 աշակերտ: Միջոցառման մրցանակային տեղեր գրաված դպրոցների թիմերը, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչները և մասնակիցները պարգևատրվել են նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, մեդալներով և դրամական պարգևներով:	
52	Հայաստանի մարզային համայնքներում երիտասարդության ներուժի բացահայտման, համակողմանի զարգացման, ինքնիրացման, ինքնադրսևորման և ինտելեկտուալ ժամանցի կազմակերպման համար նպաստավոր միջավայրի ձևավորում	52.2 Աջակցություն «երիտասարդական միջավայրի» ձևավորմանը Ժամկետ՝ 2022-2026թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Երիտասարդական 6 կենտրոնների ստեղծման նպատակով հայտարարվել են 2 դրամաշնորհային մրցույթներ, կնքվել են 6 դրամաշնորհային պայմանագրեր՝ • «Հայի բռունցք» երիտասարդական, մշակութային հասարակական կազմակերպության հետ Հրազդան քաղաքում երիտասարդական կենտրոն ստեղծելու նպատակով, պայմանագրի արժեքը՝ 25 462 400 ՀՀ դրամ: Կազմակերպությունն ավարտել է կենտրոնի ստեղծման հետ կապված պայմանագրով ստանձնած գործողությունները: • «ԼՈՖԹ» կրթության, մշակույթի և երիտասարդության զարգացման համահայկական հասարակական կազմակերպության հետ Նոյեմբերյան քաղաքում երիտասարդական կենտրոն ստեղծելու նպատավ, պայմանագրի արժեքը՝ 25 997 200 ՀՀ դրամ:	

			Կազմակերպությունը մինչև ս.թ. տարեվերջ կավարտի կենտրոնի ստեղծման հետ կապված պայմանագրով ստանձնած գործողությունները: • «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամի հետ Գորիս խոշորացված համայնքի Վերիշեն բնակավայրում երիտասարդական կենտրոն ստեղծելու նպատակով, պայմանագրի արժեքը՝ 26 302 100 ՀՀ դրամ: Կազմակերպությունն ավարտել է կենտրոնի ստեղծման հետ կապված պայմանագրով ստանձնած գործողությունները: • «Պրոֆեսիոնալ Սերունդ» հասարակական կազմակերպության հետ Արտաշատ քաղաքում երիտասարդական կենտրոն ստեղծելու նպատակով, պայմանագրի արժեքը՝ 20 997 060 ՀՀ դրամ: Կազմակերպությունը ս.թ. նոյեմբերի 4-ի դրությամբ տեղեկացրել է Նախարարությանը, որ մինչ այդ պահը պայմանագրով նախատեսված պարտավորվածություն-ները չի սկսել կատարել և ստեղծված խնդիրը համարել է անհաղթահարելի ուժի ազդեցություն (ֆորսմաժոր)՝ միաժամանակ ծանուցել է Նախարարությանը պայմանագիրը միակողմանի լուծելու մասին և խնդրել տրամադրել հաշվեհամար, որին կարող է հետ փոխանցել Նախարարության փոխանցած գումարը: Հաշվի առնելով վերոշարադրյալը և այն հանգամանքը, որ պայմանագրի 8.1 կետի համաձայն հստակ սահմանված են անհաղթահարելի ուժի ազդեցության իրավիճակները, որոնք, ըստ էության, չեն համապատասխանում ներկայացված իրավիճակին, համաձայն պայմանագրի 2.1.4 կետի «ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու» ենթակետի, ինչպես նաև հիմք ընդունելով «Երիտասարդական կենտրոնների ստեղծում» միջոցառման շրջանակներում ԵՔ-ԴՄ-ԵԿ 02/25 ծածկագրով 2025 թ. դրամաշնորհի հատկացման մրցույթի հանձնաժողովի 2025 թ. նոյեմբերի 7-ին կայացած արտահերթ նիստին հանձնաժողովի կայացրած որոշումը, Նախարարությունը միակողմանի լուծել է 2025 թ. հունիսի 12-ին կնքված ԵԴ-19-2025 պայմանագիրը: Ինչի	

			արդյունքում ՀՀ կառավարության 2003 թ. դեկտեմբերի 24-ի № 1937-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով Կազմակերպությունն ընդգրկվել է պետական բյուջեից դրամաշնորհ ստանալու նպատակով կազմակերպվող մրցույթին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում: • «Հայ առաջադեմ երիտասարդություն» հասարակական կազմակերպության հետ Ծաղկաձոր խոշորացված համայնքի Աղավնաձոր բնակավայրում երիտասարդական կենտրոն ստեղծելու նպատակով, պայմանագրի արժեքը՝ 26 322 000 ՀՀ դրամ: Կազմակերպությունն ավարտել է կենտրոնի ստեղծման հետ կապված պայմանագրով ստանձնած գործողությունները: • «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպության հետ Ճամբարակ քաղաքում երիտասարդական կենտրոն ստեղծելու նպատակով, պայմանագրի արժեքը՝ 26 203 200 ՀՀ դրամ: Կազմակերպությունն ավարտել է կենտրոնի ստեղծման հետ կապված պայմանագրով ստանձնած գործողությունները:	
53	Հանրային կյանքի բոլոր ոլորտներում որոշումների կայացմանը երիտասարդ-ների մասնակցության բարձրացում	53.3 Ժողովրդավարական և քաղաքացիական մասնակ-ցության, կոռուպցիայի վերա-բերյալ տեղեկացվածության բարձրացմանն ուղղված հանրային միջոցառումների կազմակերպում ազգային մակարդակով՝ ներառելով հաշմանդամություն ունեցող երիտասարդներին Ժամկետ՝ 2022-2026 թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Նախարարության աջակցությամբ ստեղծված և գործող երիտասարդական կենտրոններում իրականացրվել են նպատակային կրթական և մասնակցային միջոցառումներ: Միջոցառումների շրջանակում երիտասարդները ձեռք են բերել կիրառելի գիտելիքներ և հմտություններ՝ համայնքային և պետական մակարդակներում որոշումների կայացման գործընթացները հասկանալու, հանրային քննարկումներին մասնակցելու, խնդիրներ բարձրաձայնելու և առաջարկներ ձևակերպելու համար: Սիմուլացիոն խաղերի, գործնական վարժությունների և թիմային աշխատանքի միջոցով զարգացվել են հաղորդակցման, համագործակցության, քննադատական մտածողության, առաջնորդության և քաղաքացիական ակտիվության հմտությունները: Միջոցառումները հարթակ են ստեղծել նաև համայնքային ղեկավարների, պետական մարմինների ներկայացուցիչների, ոլորտային մասնագետների և միջազգային գործընկերների հետ երկխոսության և փորձի	

			փոխանակման համար, ինչի արդյունքում երիտասարդները խորացրել են իրենց պատկերացումները հանրային կառավարման, համայնքային զարգացման և ժողովրդավարական գործընթացների վերաբերյալ: ՀՀ Քաղաքացու օրվա շրջանակում պետական աջակցությամբ ստեղծված երիտասարդական կենտրոններում կազմակերպված բանախոսություն-քննարկումները նպաստել են քաղաքացիական մասնակցության մշակույթի ձևավորմանը և երիտասարդների ներգրավվածության խթանմանը՝ ընդգրկելով ավելի քան 100 երիտասարդ: Ընդհանուր առմամբ շուրջ 20 թեմատիկ միջոցառումների ընթացքում շորջ 500 երիտասարդ, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երիտասարդներ, ձեռք են բերել գիտելիք և հմտություններ, որոնք նպաստել են նրանց ավելի իրազեկ, ակտիվ և պատասխանատու մասնակցությանը համայնքային և հանրային կյանքում:	
		53.4 Մարզաբնակ երիտա-սարդների կարողությունների զարգացում՝ ուղղված մեդիա-գրագիտությանը, թվային գրա-գիտությանը և կիբեռգրա-գիտությանը Ժամկետ՝ 2022-2026թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Միջոցառման շրջանակում Մեղրի, Ախուրյան, Դիլիջան, Ապարան, Իջևան խոշորացված համայնքների երիտասարդական կենտրոններում կազմակերպվել են միջոցառումներ և դասընթացներ՝ ուղղված մեդիագրագիտության, թվային գրագիտութան և կիբեռգրագիտության ոլորտում մարզաբնակ երիտասարդների կարողությունների զարգացմանը՝ նպաստելով թվային միջավայրում նրանց անվտանգ, ակտիվ և գրագետ գործունեությանը՝ տեղեկատվության հավաստիության ստուգումից մինչև պաշտպանվածություն տարաբնույթ կիբեռհանցագործություններից (ֆիշինգ, համակարգչային ծովահենություն, կեղծ առևտրային գործարքներ, դրամաշորթություն): Ընդհանուր աառմամբ կենտրոններում կազմակերպվել է 10 միջոցառում և մեկ դասընթաց, որոնց մասնակցել է 160 երիտասարդ:	
54	Երիտասարդության սո-ցիալ-տնտեսական խնդիրների բարելավում և մասնագիտական կարո-ղությունների զարգացում	54.1 «Երիտասարդ ընտանի-քին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի իրականացում Ժամկետ՝ 2022-2026թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Շարունակվել է «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը՝ ուղղված երիտասարդ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավմանը: Ընդհանուր առմամբ 2010թ.-ից մինչև 2025թ. դեկտեմբերը ներառյալ «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի	

			հնարավորություններից օգտվել և շարունակում է օգտվել 9.905 ընտանիք, որից 3.967 ընտանիք՝ Երևան քաղաքում, իսկ 5.938 ընտանիք՝ ՀՀ մարզերում: Ընդ որում, 2.686 ընտանիք վաղաժամկետ մարել է վարկերը, որից 1.451-ը՝ Երևանում, 1.235-ը՝ ՀՀ մարզերում, 27-ը առաջնային շուկայից՝ 23-ը Երևանում, 4-ը ՀՀ մարզերում, 2.659-ը երկրորդային՝ 1.428-ը Երևանում, 1231-ը՝ ՀՀ մարզերում: Միջոցառման շրջանակում ծրագրից օգտվող նոր շահառու ընտանիքների թիվը կազմել է 760, որից սուբսիդավորում է ստացել 689 ընտանիք, ընդ որում 178-ը՝ Երևանից, 511-ը՝ ՀՀ մարզերից, իսկ 71 ընտանիք ձեռք է բերել բնակարան/բնակելի տուն առաջնային շուկայից, որից 57-ը՝ Երևանից, իսկ 14-ը՝ ՀՀ մարզերից:	
		54.2 Ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերի մասին երիտասարդության իրազեկության և ներգրավվածության բարձրացման դասընթացների կազմակերպում Ժամկետ՝ 2022-2026թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Նախարարության աջակցությամբ ստեղծված և գործող երիտասարդական կենտրոններում կազմակերպվել է ոչ ֆորմալ կրթական մեթոդներով իրականացվող 7 դասընթացներ և ինտերակտիվ հանդիպումներ: Դասընթացների շրջանակում երիտասարդներին ներկայացվել են գյուղատնտեսական ոլորտում պահանջված մասնագիտությունները, էկո-զբոսաշրջության զարգացման ժամանակակից միտումները, հյուրատների կառավարման գործնական մոդելներն ու հնարավորությունները, շրջանաձև տնտեսության սկզբունքներն ու դրանց դերը կայուն զարգացման համատեքստում, ինչպես նաև դիզայնի, բիզնես և ստեղծարար ոլորտների մասնագիտությունները՝ ընդգծելով ինքնահիրացման և զբաղվածության նորարարական ուղիները: Իրականացված դասընթացներին, հանդիպումներին ընդհանուր առմամբ մասնակցել են շուրջ 270 երիտասարդ:	
		54.3 Երիտասարդության ֆինանսական գրագիտության բարձրացման, ինչպես նաև կոռուպցիայի վերաբերյալ դասընթացների կազմակերպում	Նախարարության աջակցությամբ ստեղծված ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի և ՀՀ Տավուշի մարզի Իջևան խոշորացված համայնքներում գործող երիտասարդական կենտրոններում իրականացվել է 2 դասընթաց՝ նպատակ ունենալով նպաստել երիտասարդների ֆինանսական գիտելիքների և հմտությունների զարգացմանը խնայողությունների մշակույթի ձևավորման, բյուջեի կազմման և ֆինանսական	

		Ժամկետ՝ 2022-2026թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	որոշումների կայացման մեջ՝ այդպիսով խթանելով պատասխանատու ֆինանսական վարքագծի ձևավորումը:	
		54.4 Աջակցություն երիտասարդների սոցիալական ձեռներեցության նախաձեռնություններին Ժամկետ՝ 2022-2026թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Ապրիլի 23-ին «ԲԻԹՈՒԷՍ» հայկական սոցիալական ձեռնարկատիրության ասոցիացիան և ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը 8.190.000 ՀՀ դրամ արժեքով պայմանագիր են կնքել (ԵՔ-ԴՄ-ՍԶ 01/25 ծածկագիր) դրամաշնորհային ծրագրի շրջանակում: Պայմանագրով նախատեսվել է 2025թ. հուլիսի 15-ից հոկտեմբերի 15-ը իրականացնել «ՍԶ ԳԱՂԱՓԱՐԱԹՈՆ» ծրագիրը: Ծրագիրը ներառում է դասընթացների շարք՝ սոցիալական ձեռնարկատիրության համար պահանջվող հմտություններից մինչև բիզնես մոդելի մշակում, ռեսուրսների մոբիլիզացիա և գաղափարների ներկայացման արդյունավետ մեթոդներ: Վերջնարդյունքում մասնակիցները պետք է մշակեն և հանձնաժողովին ներկայացնեն իրենց բիզնես պլանները, որոնցից լավագույն 10 գաղափարները կֆինանսավորվեն: Գաղափարաթոնին մասնակցելու ցանկություն էր հայտնել 269 երիտասարդ, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանվածներ: Կազմակերպիչները ստացել են 76 խմբային հայտ ՀՀ բոլոր մարզերից և Երևանից, որոնցից ընտրվել են 32-ը: Եռօրյա գաղափարաթոնին մասնակցել է ավելի քան 102 երիտասարդ, ովքեր հնարավորություն են ստացել մշակելու և կատարելագործելու իրենց սոցիալական ձեռնարկության գաղափարները:	
		54.6 Բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացման առկա հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում երիտասարդության շրջանում Ժամկետ՝ 2022-2026թթ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Արարատ, Մեղրի և Ախուրյան խոշորացված համայնքների երիտասարդական կենտրոններում կազմակերպվել է բնակչության պաշտպանության և առաջին օգնության դասընթացներ: Ծրագրին մասնակցել են շուրջ 120 երիտասարդներ: Տեսական ուսուցմանը զուգահեռ իրականացվել են գործնական վարժանքներ:	

55	Երիտասարդության ոլորտում համահայկական և միջազգային համագործակցության զարգացում	55.1 Միջազգային փառատոներին, խորհրդաժողովներին, մրցույթներին, գիտաժողովներին, սեմինարներին, դասընթացներին և այլ հանրային միջոցառումներին ՀՀ երիտասարդների և երիտասարդական պատվիրակությունների մասնակցության աջակցություն Ժամկետ՝ 2022-2026թթ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	«Միջազգային փառատոներին, խորհրդաժողովներին, մրցույթներին, գիտաժողովներին, սեմինարներին, դասընթացներին և այլ հանրային միջոցառումներին ՀՀ երիտասարդների և երիտասարդական պատվիրակությունների մասնակցության աջակցություն» ծրագրով ավիատոմսի փոխհատուցում ստացել են 18 երիտասարդ:	
56	Օտարախոսների համար հայերենի իմացության և պատրաստվածության մակարդակի ապահովում	56.1 Արևելահայերենի իմացության մակարդակների չափորոշիչների ստեղծում և դրանց ներդրման և միջազգային մակարդակում ճանաչման մեխանիզմների մշակում Ժամկետ՝ 2025-2026 թթ.	Արևելահայերենի իմացության մակարդակների չափորոշիչներն ստեղծված են, դրանց ներդրմանը և միջազգային մակարդակում ճանաչմանն ուղղված գործողությունների պլանի մշակման նախադրյալներն ստեղծված են. 1. Մշակվել են ոչ հայախոսների համար հայերենի իմացության և ստուգման 6 մակարդակների չափորոշիչները (Ա1, Ա2, Բ1, Բ2, Գ1, Գ2): 2. Չափորոշիչները փորձաքննել են՝ Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի (INALCO) և ԵՊԲՀ-մասնագետները: Հաշվի են առնվել դիտարկումները: 3. Ընթացքի մեջ են Հայերենի ստուգման և գնահատման միասնական համակարգի ստեղծման աշխատանքները: 4. Ձևավորվել է առաջադրանքներ մշակող խումբը, որը վերապատրաստվուել է բրիտանական NILE հեղինակավոր կազմակերպության կողմից: 5.Պատրաստվել են առաջադրանքների մանրամասն նկարագրերը և տիպային առաջադրանքները: 6. Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը մշակել է համակարգի ստեղծման հայեցակարգը:	
		56.2 «Արևելահայերենի իմացության մակարդակների չափորոշիչները արևմտահա-	Նկատի ունենալով բարձրագույն կրթության և գիտության, ինչպես նաև հանրակրթության ոլորտներում տեղի ունեցող բարեփոխումները, ՀՀ-ում աշխատանքային միգրացիայով հարուցված խնդիրները՝ առաջնային է համարվել	

		յերենի փոխադրում, ներպետական և միջազգային մակարդակում դրանց ճանաչում, «Հայերենի իմացության մակարդակները հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում Ժամկետ՝ 2025թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	արևելահայերենի ստուգման և գնահատման համակարգի ստեղծումը: Ծրագրի շրջանակում աշխատանքային քննարկումներ է տեղի ունեցել Ֆրանսիայի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների պետական ինստիտուտի (ԻՆԱԼԿՈ)» հայագիտական ծրագրի հետ: Ինստիտուտը Ֆրանսիայի Հանրապետության Կառավարության՝ փոքրամասնությունների լեզուների աջակցության ծրագրի շրջանակներում նախատեսում է նաև արևմտահայերենի իմացության մակարդակների չափորոշիչների մշակումը: Գործընկերների հետ քննարկվում է արևմտահայերենի չափորոշիչների մշակման գործընթացին վերաբերող մանրամասներ:	
57	Սփյուռքի կրթօջախների կարողությունների հզորացում	57.1 Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպում Ժամկետ՝2022-2026թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Հուլիսի 2-25-ը Եղիշե Չարենցի անվան թիվ 67 դպրոցում իրականացվել է սփյուռքում գործող հայկական ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը: Դասընթացները կազմակերպվել են ուսումնական 7 խմբերում (ուսուցում մանկապարտեզում, ուսուցում մեկօրյա դպրոցում, տարրական ուսուցում, հայոց լեզվի և գրականության դասավանդում, հայոց պատմություն և մշակույթի պատմություն, երգ ու պար, տնօրենների վերապատրաստում)՝ յուրաքանչյուրը 120 ժամ բեռնվածությամբ: Ծրագիրն ուներ «Գիտելիքի կամուրջ» խորագիրը: Ծրագրում ընդգրկված են եղել 36 դասավանդող մասնագետներ: Վերապատրաստման դասընթացներին մասնակցել է 62 ուսուցիչ՝ 8 երկրից:	